891.99
Li · 83

ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

ԵՐԵՔ ԶԱՒԵՇՏՆԵՐ

Ա. ԵՐԿՈՒ ԾԱՅՐԱՅԵՂՆԵՐ

Բ. ԵՐԵՔ ՔԱՋԵՐԸ

Գ. ԳՈՂՑՈՒԱԾ ՍԱԳԸ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Վենետիկ — Ս. Ղազար

1932

84.99
Ե-83

6 NOV 2011

ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

891.99
Ե-83

493

ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

ԵՐԵՔ ԶԱՒԵՇՏՆԵՐ

Ա. ԵՐԿՈՒ ԾԱՅՐԱՅԵՂՆԵՐ

Բ. ԵՐԵՔ ՔԱՋԵՐԸ

Գ. ԳՈՂՑՈՒԱԾ ՍԱԳԸ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Վենետիկ — Ս. Ղազար

1932

10.04.2013

28787

Ա

ԵՐԿՈՒ ԾԱՅՐԱՅԵՂՆԵՐ

ԱՆՁԻՆՔ

ՍՈՂՈՄՈՆ ԱՂԱ — Տանուտէր։
ՊԵՏՐԻԿ ԷՖԷՆՏԻ — Փեսայ Սողոմոնի։
ԿՐՊՈ — Ծառայ Սողոմոնի, դանդաղաշարժ և ծանրախօս։
ԿԱՐՕ — Ծառայ Սողոմոնի, արագաշարժ և չուտզրոյց։
ԺՈՂՈՎՈՒՐԴ — Մէջերնէն մէկը միայն կը խօսի։

Տեսարանը կը ներկայացնէ Սողոմոն Աղայի տունը։

Ծանօթութիւն. — Ձաւէշտիս յօրինողն է Հ. Ա. Տիրոյեան, որ դիտմամբ գրած է զայն ռամկերէն լեզուով ու թրքախառն բառերով։

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գեղ. Բանաստեղծ
ՀԱՍԱՐ-ԱՌՈՒՑՔ
Ս. Ա. Մաշտոցի անվան
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

40974-63

ՄԻԱԿ ԱՐԱՐՈՒԱԾ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Գետնի վրայ փռուած երկու հասարակ անկողինք սենեկի մը մէջ. միոյն մէջ կը խորդայ Կարօ, միւսին մէջ Կրպօ՝ նոր արթընցեալով՝ կը ձգկրտի կը յօրանջէ, և անկողնոյն մէջ նրստած՝ կը սկսի դանդաղօրեն մեներսօսել. մի և նոյն պահուն ձարտար մէկը թատրեն դուրս՝ քանի մ'անգամ արաղաղի ձայնը կը հնչեցընէ։

Կրպօ. — Է՜... ի՜նչ անուշ բան է քնանալն և քունի մէջ ալ անուշիկ թուխուշիկ երազներ տեսնելը... (Ցոյց տալով Կարօն) Ը՛օ սըւոր նայէ ինչպէս ալ խըռխռը կը խորդայ... լուսը բացուել է, իսկ ինքը դեռ չընթըռկել երկընցեր է... Աքաղաղը արդէն խօսեցաւ. հիմայ անշուշտ Սողոմոն Աղանիս ալ արթընցեր է և խահուէին կը սպասէ... Հէլէ մէյ մը գար՝ անցած աւուր պէս ներս մտնէր ու իրեն սարսափելի աքացի հարուածներով կոտրրտէր ջարդէր Կարօյի կողերը, ուքերը... ան ատեն տեսնեմ ալ պիտի պարծէ՞ր իրեն ա-բաց արագ շարժելուն վրայ... «Արագաշարժ եմ». միշտ բերանն է այս խօսքը... Մեծ բան, թռչունները, շները, կատուները, բոլոր վայ-

րենի կենդանիք ալ արագաշարժ են. մարդս ալ որ արագ արագ վազէ, ցատքէ, անոնց չի՞ նմանիր... Է՛հ, ի՞նչ կայ... ես որ իբր թէ դանդաղ, այսինքն այնչափ արագ չեմ շարժիր, միթէ իրմէն քի՞չ բան կը գործեմ... Բոլոր տան հոգը իմ վրաս է... Մտածեցէք մէյ մը, ահագին տուն մը. երկու սենեակ կայ և մէկ խոհանոց... է՛հ, ասոնք աւելը կարգի դնելը քի՞չ բան է մի... Հապա բակն իջնելու սանդուղը որ 12 անվերջանալի՜ աստիճաններ ունի՝ երեք օր հեղ մը աւելը քի՞չ աշխատութիւն է մի... հապա ամէն օր տիրոջս համար կերակուր եփելը. խահուէ պատրաստելը, չորս հինգ հատ ալ պնակներ, կէս-օրին և իրիկուան ճաշինը մէկտեղ առած՝ լուալը, սրբելը, վրայէ վրայ շարելը, տոլապը դնելը... Հապա ամէն Աստուծոյ օր լամբան պատրաստել, վարագոյրները քաշելը, տիրոջս անկողինը շտկել շրտկրտուելը, ախը դեռ ի՞նչ ըսեմ, ո՞ր մէկ բանն հիսապ ընեմ... այդ ամէնն ալ իր դայտային ընելը միթէ կարոյին բերնի՞ն ինկած է, և այն ալ մէկ օրուան մէջ ընել պրծնել... Հէլէ չըլլալու բանն ըսեմ, թէ որ ընել ալ կարենար՝ ի՞նչխըտար զեան պիտի չհասցընէր տիրոջս... ըրած ծառայութեան հետ՝ առած հախն ալ որ վրան դնէր՝ դարձեալ եղած վնասները հատուցանել պիտի չկրնար:... Եւ սակայն եկո՛ւր նայէ որ ինքը ինծմէն աւելի տիրոջս աչքը մտեր է... Միշտ բերանն է. «Կրպո՜, դանդաղ ես, շուտ շարժէ. աղէկ որ Կարօն կայ, թէ չէ՝ գործս առաջ պիտի չերթար»:... Եւ սակայն թէ որ ես չըլլայի՝ Կարօն ջարդել, կոտրել, փճացնելէն զատ ուրիշ բան պիտի չընէր... Է՛հ, ինչպէս ալ այսքան իրարու հակառակ բնութիւն ունինք, և սակայն երկուքնուս ալ անունը դժբախտաբար

Կարապետ դրած են. լաւ որ զիս՝ Մշեցի ըլլալուս՝ Կրպո կը կոչեն, զինքն ալ՝ Էրզիրումցի՝ Կարօ կ'անուանեն, որ գուցէ կարելի–կարկըտելէն առաջ կու գայ... լաւ չէ՞ր որ Կարօ կամ Կոտրօ անուանէին, քանի որ կոտրող–ջարդողին մէկն է: — Է՛հ, թողունք այս խենթումենթ անունները, հէլէ սըւոր խորդալը դադրեցնենք... «Ը՜օ. Կարօ՜, Կարօ՜ (կը մշտե երկրնենալով), ելի՛ր, լուսցեր է»... Կարծես մեռել սատկել է, և ոչ իսկ կը ցընցուի... Հիմայ իրեն կը հասկցնեմ, ձեռքերս քիչ ուժ ունին նէ՝ ոտքերս թող գործեն (ոտքերով կը ցնցի). »Ը՜օ՛ ելի՛ր, վեր կանգնէ... Կարծես Եփեսոսի օխտը մանկանց քունն է գքեզ տարեր»:

Կարօ. — (աչքերը շփշփելով ու բարկացած) Այ ջինդարի, ի՞նչ է դարձեալ չես թողուր որ քնանամ... Երէկ իրիկուն մինչև կէս գիշեր աշխատութեան մէջ էի. քու ընելիք գործերդ ալ ես պիտի ընեմ եղեր. իսկ դուն որ ամբողջ օրը ծոյլ ծոյլ կը քնանաս, հիմայ ելեր կը պարծիս որ այսօր ինծմէն կանուխ արթնցեր ես:

Կրպօ. — Հա՛, հա՛, հա՛, հա՛ (խնտալով)... ինչուան կէս գիշեր աշխատե՞ր է. տէ՛ եկուր տէ՛ մի՛ խնտար... հա՛, հա՛, հա՛, հա՛... Ի՞նչ աշխատութիւն կար որ...

Կարօ. — (ձեռացնելով զԿրպօ) Հա՛, հա՛, հա՛, հա՛... Պէ՛ շաշխըն, խոհանոցին դուռը բաց թողեր էիր քնանալու եկած վախտդ... և դուռ դրացի կատուները պիւթիւն թօփլամիշ եղեր ներս մտեր էին. թողունք գողցած կերածնին՝ ետեւէ ետև վազվըռտելով վեր վար կարծես ճիրիտ կը խաղային ամէն բան տակն ու վրայ ընելով... ծ՜օ՛, մէյմը վար իջիր տես քանի՞ պնակ, ոլքան պուտուկ գետին ձգեր ջախջախեր են, և անկէ ետքը եկուր վրաս

խնտայ հա, հա, հա, հա (ձեւացնելով Կրպօյի ձայնը)։

Կրպօ. — Սուտ կ'ըսես ծօ'... ես դուռը մուղքեամ փակեր էի. ով գիտէ ինչ սատանութեան համար դու ներս մտեր ես, և քու կատուի արագութեամբդ չանախ–չէօմլէկ կոտրըտեր ես, և յանցանքը վրաս կը թալլես...

Կարօ. — Ծօ' ես սուտ ըսեմ, հապա Սողոմոն Աղանի՞ս ալ սուտ կ'ըսէ. ինքն ալ հետս վար իջաւ. կատուները մէկիկ մէկիկ մութլախէն դուրս վռընտեցինք, երկու հատն ալ չան սատակ գետին փռեցինք...

Կրպօ. — Ըսել է որ դուն գնացեր առաջուց դուռը բացեր ես, որ վերջէն վրաս յանցանք ձգես, ու դուն տիրոջս աչքը մտնես...

Կարօ. — Ծօ', հոգի հաւատք բեր՝ որ սըւոր խօսքին դիմանայ... հիմայ քեզի կը հասկըցընեմ (ապառնալեօք գաւազան մը կը բաշէ՝ վրան յարձրկեղոր դիրքի մէջ, և ահա Սողոմոն Աղայի ոտքերուն դիւռոցը կը լսուի)... Ծօ', Աղան կու գայ... չափո՞ւք... (Արագաբար անկողինը կը ժողոռըռտէ) թէ չէ՝ բաներնիս բուսած է։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Սողոմոն Աղա. — (գիշերոռան զգեստով, բայց կօշիկներ հագուած, և բարկացուտ կը դիմէ ներս՝ խարազան մը ձեռքը)։ — Ծօ' անպիտաններ, դեռ չընթըռկեր երկընցե՞ր էք... աս քանի՞ մէկ է կը կանչեմ, կը պոռամ և դեռ մէկերնիդ չէք շարժիր գար... Ծօ', դո՞ւն ալ մի Կարօ թէմպէլցեր ես... Ա՛ռ քեզի փայըդ (խարազանը կը շարժէ, ոռսկից կը խռչսափի Կարօ իր արագոռբեւամբ)... Ծօ' դուն դեռ

անկողի՞նդ ես կեցեր, ծո՛յլ Կրպօ. (Կը յարձրկի Կրպօյի վրայ, որ ինքզինք բարձով ոռ վերմակով կը պաշտպանէ աքացիի և խարազանի հարոռածներէն)... արդէն օրն ի բուն կը քնանաս... (Կարօ արդէն անկողինը ժողոռած դէպ ի դուռը կը դիմէ՝ դուռը տանելու. բայց արագոռբեւնէն ոչ չի դներ՝ որ աթոռ մ'ալ անկողնին մէջ փաթթեր է, որուն ոտքը արգելը կ'ըլլայ դռնէն դուրս հանելու. արագ գետին կը դնէ, աթոռը կ'ազատէ և դուրս կ'ելլէ, և փուռթով ներս մտնելով բարեւի կը կանգնի տիրոջը դիմաց. մինչդեռ Կրպօ ալ դանդաղոռբեւամբ հարոռածներու կ'ենթարկուի՝ երբ անկողինն ամփոփելով դուրս կը հանէ ոռ տիրոջ դիմացը կու գայ կը կանգնի)... Հա, այսպէս ծեծ պէտք է ուտես՝ որ քիչ մը շուտ շարժիս։... Կարօ, հոս եկուր, տես ինչ կ'ըսեմ. (Դարանէ մը կը հանէ քանի մը կապոց և քանի մը նամակներ)։ Այս ծրարները պէտք է թղթատուները տանիս, և այս նամակներն ալ վրան գրուած հասցէներուն, և թղթատուէն ալ թէ որ իմ հասցէիս ծրար կամ նամակ կայ՝ առ, բեր ինծի. տէ հայտէ (Կարօն դուրս կը թռչի)... Դուն ալ, Կրպօ, շուտ ըրէ՝ ելլէ, չտկէ, կարգի դիր այս սենեակը, որովհետև հիւր պիտի գայ քիչ ատենէն... Նայէ պատրաստ ըլլայ, ես կէս ժամէն կը դառնամ, քեզ տեսնեմ... (Կը մեկնի)։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Կրպօ. — «Ալէ՛, շտկէ՛, կարգի դիր, պատրաստ ըլլայ»... է՜, լեզուով ի՜նչ դիւրին է ըսել..։ բայց ըսողը չի մտածեր թէ ոլքան խորհելու գործ է, ինչքան խելք բանցընելու է՝ որ օրինաւոր կերպով գործուի։ Օրինաւոր կերպով գործելու համար ալ՝ նախ պէտք է մարդ օրինաւոր մտածէ, և օրինաւոր մտածելու համար ալ՝ մարդ պէտք է այսպէս հանգիստ նստի. (Կ'առնէ արոռ մը և կը նստի)... Գէթ ինծի համար այդպէս է. չեմ կրնար ոտքի վրայ կայնած ատենս՝ շնորհքով բան մը մտածել, մանաւանդ ծեծ ուտելէս վերջը. անշուշտ ոտքերս ալ՝ որ կայնած ատեն կը նեղուին՝ ըղեղիս հետ կապ մ'ունին։ Ի՜նչ որ է նէ. հիմայ սկսիմ կարգի դնել ընելիքս հանդարտօրէն... Ի՜նչ լաւ պիտի ըլլար, որ ամէն մարդ նախ բանի մը վրայ լաւ մտածէր, տեղեկութիւն առնէր, վեր վար չափէր չափչփէր, աջուձախ կշռէր կշռադատէր, ու անկէց վերջը ուրիշէն պահանջէր և ըսէր շուտ ըրէ, շուտ կ'ուզեմ կատարես... Աղաս ալ, որ ուրիշ կողմէն շատ աղէկ մարդ է, բայց այդ պակսութեան տէրն է. ամէն բանի համար կ'ըսէ և կը կրկնէ. «Շուտ ըրէ, շուտ կ'ուզեմ»... Շուտ բառը իրեն բերնին մէջ բուսաւ, իմ ալ ականջներուս մէջ... Հիմայ ալ ըսաւ «Շուտ կարգի դիր այս սենեակը»... Բայց չի՞ հասկընար որ շուտով եղած բանը անկատար կ'ըլլայ, ձախորդ կ'երթայ... Այս ալ չնմանի անցած աւուր սեղանին պատմութեան, երբ որ հրաւիրեալներն եկան շատ կանուխ, այսինքն՝ իրենք ճիշդ ատենին եկան, կէսօրը, բայց տէրս առջի

գիշերուընէ միայն ինծի իմացուցեր էր որ հրաւիրեալներ պիտի գային անմիջապէս յաջորդ օրը... Օրհնած, երկու երեք օր առաջ իմացընէր՝ չէ՞ր մի ըլլար, և օրինաւոր ըլլար, որ կերակուրները չեփուած չեփուած առջեւնին չդնէի... Ի հարկէ, խեղճերը բան չկրցան ուտել և անօթի փորանց ալ տներնին դարձան... Տէրս ալ բոլոր յանցանքն իմ վրաս բեռցուց՝ «դանդաղ ես ծոյլ ես, բանի եարար չես» ըսելով... Թէ որ ինքն ալ ինծի պէս նստած առաջուց մտածէր ընելիքին վրայ, գէթ երկու երեք օր կանուխէն ըսած կ'ըլլար... Բայց ի՜նչ օգուտ, եղածն եղած է. հիմայ մենք ընելիք գործերնիս մէյ մը խորհինք ու կարգադրենք։ Ուրեմն, այս սենեակը պիտի շիտկուի նախ և յետոյ աւլուի... Զէ՜, մեղայ, ի՞նչ կ'ըսեմ... առաջ պէտք է աւլեմ, վերջը շտկրուտրկեմ... բայց, լաւ մը մտածեմ... չէ՞ որ աւլելէս վերջը շտկելու որ ելլեմ՝ դարձեալ թոզ պիտի ըլլայ, ու նորէն պէտք պիտի ըլլայ աւլել... Ուստի, որոշուած է, նախ պէտք է կահկարասիքը կարգի դնեմ ու յետոյ աւլեմ. և կարգի դնելու համար ալ՝ սա աթոռը պէտք է անդիու անկիւնը տանիմ... է՛, հարէ՞ն... Եարէն Աստուած ողորմած է, դարձեալ կը նստիմ ու վերջի ընելիքս կը մտածեմ... Լաւ ուրեմն, սկսիմ... (Կը բռնէ իր նստած աթոռը՝ ցոյց տուած անկիւնը տանելու. վրայ կը հասնի Սողոմոն Աղան)։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Սողոմոն Աղա. — (չորս կողմը նայելով, զարմացած ու զայրացած) Ը՜օ, ի՞նչ կը տեսնեմ... կէս սահաթն անցաւ և դուն դեռ բան մը չե՞ս ըրած, դեռ սենեակը խառնափնդոր ու աղտոտ վիճակի մէջ է...

Կրպօ. — Աղա, հանդարտէ, հիմայ, հիմայ... (Արոռը ձեռքը՝ ասդիս անդիսի պտտցընելով, կը փորձէ թէ տեղն յարմար է)։

Սողոմոն Աղա. — Ը՜օ, ի՞նչ կ'ընես։

Կրպօ. — Աղա, կը մտածեմ թէ սա աթոռը ո՞ր քէօշան լայըղ է դնելու։

Սողոմոն Աղա. — Պէ՛ շաշխըն, չե՞ս տեսներ որ գետինը չէօփլիւկ դարձեր է, աթոռները տեղը դնելէն առաջ պէտք չէ՞ որ աւլես...

Կրպօ. — (ձեռքի աթոռը հրամցընելով Սողոմոնի) Աղա, կը խնդրեմ մէյ մը նստէ, ու անանկ խօսէ, ոտքի վրայ լաւ չէ...

Սողոմոն Աղա. — Ինչո՞ւ նստիմ, ինչո՞ւ ոտքի վրայ լաւ չէ խօսիլ...

Կրպօ. — Աղա, ի՞նչ ըսեմ. ես ալ որ քեզի պէս ոտքի վրայ էի՝ մտածեցի որ առաջ պէտք էր աւլել ու յետոյ չտկել չտկըռտկել... բայց երբ որ նստայ՝ հակառակը պատշաճ տեսայ, և այնպէս ալ սկսայ...

Սողոմոն Աղա. — (կը քաշէ գաւազանը) Ը՜օ՛ անպիտան թէմպէլ, հիմայ քեզի կը հասկըցընեմ...

Կրպօ. — (չոքելով աղերսալիր) Ամա՜ն, Աղա, ոտքի՛դ մեռնիմ...

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Կարօ. — (դռնէն ներս ցատքելն ու Սողոմոնի վեր բարձրացուցած գաւազանը կռնկէն բռնելը մէկ կ'ըլլայ... Թուրքի տակ ուռնի երկու մեծկակ կապոցներ. գրպաններէն, ժոցքն դուրս կը հանէ ուրիշ կապոցներ նամակներու, ղրագիրներու, որոնք ամէնքն ալ ուրիշի հասցէին են). — Աղա, փոստայէն դարձայ. ահաւասիկ նամակները...

Սողոմոն Աղա. — (առ Կրպօ Գնա Կարօյին դուրսան եղիր, որ գաւազանս բռնեց... (Առ Կարօ) Ը՜օ, աս ի՞նչըտար բան այսօր եկած է ինծի փոստայէն... (Կը նայի ծրարներուն և նամակներուն և ղրագիրներուն մի առ մի)... Ը՜օ, ասոնց հիչ մէկն ալ իմս չեն, ուրիշներունն են... Ը՜օ՛ վրանին չկարդա՞ս...

Կարօ. — Աղա, հիչ կարդալու վախըթ չունեցայ... հէ՛լէ սանկ առի ու բերի, ըսելով որ իմ տիրոջս են...

Սողոմոն. — Ը՜օ՛ ինչո՞ւ սուտ կ'ըսես... Կէս սահաթէն էւել է որ գքեզ փոստան ղրկեցի... ուրիշ անգամ աչք բանալ գոցելու մէջ կու գայիր. հիմայ ի՞նչպէս կ'ըսես՝ որ վախըթ չունեցար, խլեցիր ու բերիր... Ո՛ գիտէ, կէնէ ո՞ր մէհանան մտեր ես... բերանդ ալ օղի կը հոտի...

Կարօ. — (աղաչական) Աղա՛, մի՛ բարկանար, ի՞նչ ընեմ, չիտակը խօսիմ... Այս մեծ ծրարին նման ուրիշ մ'ալ կար փոստան. առած ժամանակս՝ հոն վրայ փրթաւ Կակալենց Մատթոս Աղային ծառան, ան ըսաւ՝ իր տիրոջն է, ես ըսի՝ իմ տիրոջս է. քաշեցինք, քաշքշեցինք ձեռքս մնաց՝ պատառ պատառ եղած, կը

տեսնե՞ս, Աղա... բարկացայ, աչքերս դարձան, ու սանկ մէյ մը քաշելով (ձեռքը եղած ծրարով կը ձեւացրնէ՝ դէպ ի Սողոմոն շարժելով, որ սարսափած մէկդի կը փախչի)... Աղա, քեզի չեմ զարներ, ըսելիքս հասկըցնելու համար է... դիմացինիս գլխուն որ իջեցուցի՝ գետին փռուեցաւ... քթէն արիւնը ֆշաց, գլուխն ալ պատին զարկաւ և վիրաւորեց... Վրաս թափեցան բռնեցին զիս... հինգ հոգւոյ դէմ բռնցի, աքացի, խածխըծելով, ճանկըռտելով զիս կը պաշտպանէի. փախչելու վրայ էի, և ահա չավուշ մը քանի մը զափթիյէներով եկաւ բռնեց զիս... Գիտես, Աղա, անոնց սիլահին հետ խաղալ չըլլա՞ր... խուզի մը դարձայ... առին զիս դատաւորին տարին, և յետոյ ծակը դրին, գուռն ալ վրաս փակեցին։... Բանտին այն օթախին մէջ ուրիշ մարդ չկար. պատուհան մը կար՝ ուսկից լոյսն ու քամին մէկտեղ ներս կը մտնէին, որովհետև ճամերը կոտըրտած էին, և երկաթներն ալ ժանգէն փտած էին, և ծայրերնին միայն ողջ մնացեր էին՝ գամերու նման։ Պատուհանը շատ բարձր էր. սենեկին մէջ բան չկար որ վրայէ վրայ դնէի՝ հասնէի. ուստի քակեցի մէջքիս կապը. քանի մը հեղ օդ նետեցի, և հանգոյց մը պատուհանին երկաթներուն ծայրէն մէկը բռնեց. փորձեցի որ մուղքեամ էր, և ճամպազի պէս վեր բարձրացայ. նայեցայ որ դուրսը վարը ձիու ֆըշխի տարածեր էին. կակուղ էր, առանց վնասուելու վրան ցատքեցի, և փախայ. հասայ ճանչուորի մը խանութը՝ ուր այս ծըրարները թողեր էի՝ բռնուած ատենս... հոն՝ գաւաթ մ'օղի պատրաստ էր, կոնծեցի՝ որ ոյժ առնեմ... ծրարներն առի և շունչս կտրած՝ վազեցի եկայ... Է՛հ, կ'ուզէի որ կէս սահաթի մէջ Կրպօն այսքան գործ կատարէր...

Կրպօ.— Ու քեզի պէս կռիւ ընէր, բանտ մտնէր, գլուխ, ձեռք ու ոտք չախչախելու վտանգի մէջ ինկնար... պարծենալո՞ւ բան...

Սողոմոն Աղա. — (ծիծաղելով) Ծո՛ հիմայ ալ իրար մ'իյնաք. մէկդ չափուք խև, մէկալդ թէմպէլ խելառ... չգիտեմ որո՞ւդ գործ յանձնեմ՝ որ կատարուի, բայց առանց պէլայի մը կատարուի... Հայտէ շուտ ըրէք, հիմայ երկուքնիդ մէկտեղ, սա սենեակը կարգի դրէք, շուտ Կրպօ, Կարօ... ես քանի մը վայրկենէն կը դառնամ՝ մաքրուած պիտի ըլլայ... (Կ'ելլէ։ — Կարօ կը խլէ աւելը Կրպօյի ձեռքէն և արագաբար կ'աւլէ սենեակը՝ փոշին վեր բարձրացնելով և քանի մ'արոռներ գետին գլորտրկելով. կը ձգէ աւելը գետին, և արոռները վեր վերցրնելով՝ արագաբար սպասերուն տակ կը գետեղէ. մինչդեռ Կրպօ կ'աղաղակէ անգործ՝ «Ծո՛ կամաց ըրէ, ծո՛ սա փոշին տես, ծո՛ աթոռները կը կոտրըտես»... և. մինչդեռ կը ծռի՝ գետին ձգուած աւելը վերցրնելու, այն պահուն Կարօ արոռ մը ձեռքը՝ կը զարնուի Կրպօյի և գինքը գետին կը գլորէ. Կարօ ինքն ալ զարնուած՝ քիթն գետին կ'իյնայ և ձեռքի արոռին ոտքը կը խորտակէ... բայց սենեկին կահ կարասին կարգի մնած է... Մինչդեռ Կրպօ դեռ գետին փռուած՝ կը գանգատի և կը հեծէ, Կարօ վեր կը թռչի, շուտ մը՝ կոտրած արոռը դուրս կը տանի, և ներս մտնելով աւելն ալ կ'առնէ դռնէն դուրս կը նետէ, և յետոյ կը վազէ վեր կը հանէ գետնէն՝ նաև Կրպօն, որ բազկաթոռի մը վրան կ'իյնայ կը մնայ՝ շնչասպառ. վրան մարմրուք կու գայ, ջուր կ'ուզէ «Ուշքս կ'երթայ, Կարո՛, քի՛չ մը ջուր»։ Կարօ կը վազէ ջուր կը բերէ ու խմցրնէ, քիչ մ'ալ երեսը կը սրսկէ, մինչդեռ Սողոմոն վրայ կը հասնի)։

Սողոմոն Աղա. — Ծո ի՞նչ կայ դարձեալ, ի՞նչ եղաւ որ...

Կարօ. — Աղա, բան չկայ... ես ու Կրպօն մէկ-տեղ տես սենեակը չափուք աւլեցինք, կարգի դրինք... բայց խեղճը սաստիկ աշխատութեան չնչասպառ եղաւ, մարմրուք կու գար վրան, ջուր տուի... հիմայ ադէկ է։

Սողոմոն Աղա. — Ի՞նչ որ է նէ՝ անցած ըլլայ. քիչ մը շատ փոշի ելած է, բայց ամէն բան կարգի վրայ է։ — Հիմայ, Կարօ, դուն գնա կանչէ ինծի փեսաս, Պետրիկ էֆէնտին. այս ուրիշին հասցէներով բերած ծրարներդ ու նամակներդ ալ տար թղթատունը յանձնէ՝ որ իրենց տէրերուն տանին բաժնեն (Կարօ դուրս կը բռնի՝ ծրարներով)։ — Դուն ալ, Կրպօ, տէ հայտէ, գնա չափուք լաւ խահուէ մը պատրաստէ ինծի և գալիք Պետրիկ էֆէնտիին համար. (Կրպօ կը մեկնի՝ գրեթէ քայլերը համրելու պէս քաղուածքով մը)։

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

Սողոմոն Աղա. — Ի՞նչ ընեմ... այս տեսակ ծառաներու ձեռքը գերի եմ ինկած. իրաւ չքաշուելու՞ դարտ է. ամա մէկ թարաֆէն ալ առանց գանգատելու պէտք է քաշեմ, որովհետև ես իմ գլուխս այս պէլային մէջ ձգեցի, և Թուրքին առակը կ'ըսէ. «Ինքիրեն վար ինկող տղան՝ չի լար»... իմ ի՞նչ պէտքս էր՝ այս ծառաներս՝ դեռ պատանի հասակնէն, մէկը Ս. Կարապետի Մշոյ որբանոցէն, միւսն ալ Էրզիրումի Կարմիր Վանքի որբանոցէն ընդունիլ, և բարիք ընեմ ըսելով՝ իմ տունս առնել. որ հիմայ եթէ դուրս ուզեմ հանել՝ տուն տեղ չունին, հայր մայր չունին, ան-

տէր անտերունչ փողոցը պիտի մնան և հաց մուրան... Այդ ալ ըլլալու բան չէ, մարդս քարէ սիրտ պէտք է ունենայ... Հէլէ, ճըշմարիտը կ'ուզէ՞ք լսել, քիչ մ'ալ փառասիրութիւնը մէջտեղ կայ. միշտ ինքիրենս ըսեր եմ. Այս երկու պատանիները՝ երկուքն ալ այո՛ պակասաւոր են, մէկը սաստիկ արագ գործելու մէջ, միւսը սաստիկ ծոյլ. ուստի ես զիրենք կրնամ շտկել՝ միշտ մի և նոյն տան մէջ քովէքով ապրեցընելով, որպէս զի քիչ մը դանդաղը արագին պակսութենէն առնելով, և քիչ մ'ալ արագը ծոյլին թէմպէլութեան հետեւելով՝ երկուքն ալ գան ու մէջտեղը գտնեն, «Ուր որ (կ'ըսէ իմաստուն առածը) կը գտնուի կատարելութիւնը»։ Այո՛, այս երկու խելառները՝ օր մը այս կերպով պիտի խելօքնան, և սէյր ընողներն ալ պիտի ըսեն. «Այսպիսի գործ մը՝ միայն Սողոմոն Աղան կրնար մտածել ու գործադրել, մաշալլա»... Այն ատեն իմ քէֆս պիտի գայ, և այն ատեն քարը տեղը պիտի դնեմ նաև ես ալ Պետրիկ էֆ. փեսայիս առջև, որ միշտ այս իմ ըրածս անկարելի և վնասակար կը քարոզէ... Տեսնենք. ինքն հիմայ իմ վրաս կը խնտայ, բայց խելացի առակը կ'ըսէ. «Վերջին խնտացողը՝ լաւ պիտի խնտայ»... Եւ յուսամ՝ որ ես պիտի ըլլամ այդ վերջինը... Բայց հիմայ սա Պետրիկ էֆէնտին համոզեմ՝ որ թաղական վարժարանին հաշիւները կնքենք լմընցընենք, որովհետև քանի մ'օրէն ժողովի պիտի հանուի, ու պէտք ենք պատրաստ ըլլալ... Ո՛հ, ճիշդ ինքն ալ վրայ եկաւ...

40974-63
ՀՍՍՌ-ԱԳԻ.ԵՐ
Ա. Ա. Ա. Մասիսյան

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Սողոմոն Աղա. — Օ՛հ, բարի եկար, հազար բարով, Պետրիկ էֆէնտի... Հրամէ՛, հրամէ՛...

Պետրիկ. — (շնչասպառ և հատկրկեալ խօսելով). Շնորհակալ եմ, շնորհակալ եմ...

Սողոմոն Աղա. — Ի՞նչ կայ, սիրելի փեսաս, ի՞նչ ունիս, շունչդ կտրեր է...

Պետրիկ. — Ո՛հ, թող քիչ մը հանգիստ չունչ առնեմ... ձեր Կարօն... ես կարծեցի թէ... կրակ... ընկեր է տուներնիդ... աւազակներ զքեզ կը սպաննեն...

Սողոմոն Աղա. — Չեմ հասկընար ինչ կ՚ըսես, էֆէնտիմ... ոչ կրակ կայ և ոչ աւազակ, փառք Աստուծոյ:

Պետրիկ. — Այո՛, հիմայ ես ալ կը տեսնեմ որ ոչ կրակ և ոչ աւազակ կայ... Բայց մէյ մը տեսնէիր թէ ինչպէս Կարօն վազելով տանս առջեւէն անցաւ, գիս պատուհանը տեսնելով՝ պոռաց. «Պետրիկ էֆէնտի, շո՛ւտ հասիր Սողոմոն Աղայիս տունը, անհանդարտ քեզի կը սպասէ, շո՛ւտ շարժէ, թէ չէ ուշ կը մնաս և հասնիլդ օգուտ մը չի բերեր»... Այս ըսելն ու խենթաբար դէպ ի վար վազելը մէկ ըրաւ, պատասխանի չսպասելով: Մտածեցի որ անպատճառ ձախորդութիւն մ՚եկած պիտի ըլլայ քու և կամ տանդ վրայ. վար վազեցի սանդուղներէն, գլխարկս գլուխս դնելը, գաւազանս առնել ու դռնէն դուրս թռչիլս՝ աչք բանալ գոցելու գործ մ՚եղաւ. գիտես՝ քառորդուան մը ճամբայ է. մտածէ մէյ մը որ վազելվազ գալս չունչս վրաս կը թողո՛ւր... Ուստի մի զարմանար... քանի որ քու երկու խենթ ծառաներդ քովդ կը պահես՝ դեռ

այսպիսի շա՜տ բաներ մեզի պիտի հանդիպին...

Սողոմոն Աղա. — Եղածին շատ կը ցաւիմ, Պետրիկ էֆէնտի, յանցանքն իմս է՝ որ Կարօն ղրկեցի քեզի. մտքէս ալ չէր կրնար անցնիլ... ի՞նչ ընեմ, թէ որ Կրպօն ղրկէի՝ գուցէ մինչև կէս օր անճախ գար քեզի իմաց տար, և դուն տնէն մեկնած պիտի ըլլայիր... Ուստի Կարօն ղրկեցի, որ հրամես կանուխ գաս՝ որ խահուէնիս մէկտեղ խմենք, և մեր թաղական դպրոցին հաշուէկշիռը կարգի դնենք՝ դիմացի Կիրակնաւուր ժողովին ներկայացնելու համար:... Բայց կը տեսնեմ որ նախ հանգչելու պէտք ունիս... խնդրեմ սա սիկարը վառէ... հէլէ խահուէնիս խմենք ու վերջը հաշուի մասին կը խօսինք... Կրպո՜, Կրպո՜ (դէպ ի դուռը կը կանչէ):

Կրպօ. — (բատրեն դուրս) Հրամէ՛, աղա՛:

Սողոմոն Աղա. — Խահուէն դեռ չեղաւ, շուտ բեր..:

Կրպօ. — (դրսեն) Հիմա՛, հիմա՛...

Պետրիկ. — Իրաւ որ, Սողոմոն Աղա, շատ կը զարմանամ սա քու ծառաներուդ համար ունեցած համբերութեանդ վրայ. ամէն մարդ, ամէն տուն, բոլոր քաղաքը անոնց կռիւներուն և ամենօրեայ խենթութեան ըրածներնուն վրայ կը խօսին, շատերը զքեզ կը մեղադրեն. կ՚ամաչնամ մէկուն հետ տեսնուելուս, ի՞նչ ընեմ, փեսայ եղեր եմ քեզի. գիս տեսնելնուն՝ զքեզ կը յիշեն, մէկէն խօսք կը բանան Կարօյին ու Կրպօյին վրայ... Ես հազար խօսք ալ գտնամ զքեզ պաշտպանելու, քու պատիւդ պահելու, բայց ի զուր է, հարկ կ՚ըլլայ փախչիմ հեռանամ...

Սողոմոն Աղա. — Է՜հ, Պետրիկ էֆէնտի, թող երթան խօսին. իրենց ի՞նչ ինչաս... Երկու մախսըմ որբեր քովս առեր, պահեր, մեծցու-

ցեր եմ։ Գիտես՝ որ քեզի տուած աղջկանէս զատ՝ ուրիշ զաւակ չունիմ. ասոնց վրայ գութ ունեցեր եմ, զիրենք կրթել կ'ուզեմ... Պակասաւոր են, այդ ես ալ գիտեմ, ախըր ամէնքս ալ մէյմէկ պակսութիւն ունինք. բայց մարդիկ իրենցը կը մոռնան, ուրիշինը կը տեսնեն... Անգաղտնի փիլիսոփային ըսածն է. «Աստուած զէմպիլով մարդուս պակսութիւնները կոնակէն կապեր կախեր է»... որով միշտ ուրիշինը կը դիտէ՝ իր կրնակինը չի տեսներ... Բայց սա խահուէն դեռ չեկաւ... (Դէպ ի դուռը կը կանչէ) Կրպո՜, շուտ ըրէ, բեր խահուէն...

Կրպո. — (դրսեն) Աղա, համբերութիւն ըրէ քիչ մ'ալ, հիմայ, շուտով...

Սողոմոն Աղա. — Ը՜օ մէկ սահաթ եղաւ՝ ի՞նչ կ'ընես... օ՜ֆ, ամա՜ն...

Կրպո. — (ներս մտնելով) Աղա, խահուէն չէ-քէրո՞վ կ'ուզես թէ սատ։

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛ հարիւր անգամ չիներ ես, չե՞ս գիտեր որ թէ՛ ես և թէ Պետրիկ էֆէնտին խահուէն անուշ կը խմենք...

Կրպո. — Լա՜ւ, լա՜ւ, միտքս եկաւ, շէքերով կը խմէք. (կ'երթայ դարանի մը կը հանի ջաղացը)։

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛, ջաղացն ի՞նչ պիտի ընես հիմայ։

Կրպո. — Աղա, խահուէն աղալ պէտք է։

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛, դու գնա հիմայ եփածդ բեր, վերջը աղալիքդ գնա աղա...

Կրպո. — Աղա, համբերութիւն, հիմայ, հիմայ. կ'աղամ կ'եփեմ ու կը բերեմ, հիմայ հիմայ (երթալով դէպ ի դուռը)։

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛, եփելիքդ դեռ նո՞ր պիտի աղաս, նո՞ր պիտի եփես... Ը՜օ՛, մինչև հիմայ ի՞նչ կ'ընէիր, սահաթ մ'է որ ըսեր եմ քեզի խահուէ մը չինես...

Կրպո. — (դրսեն առջեւեն) Աղա, համբերութիւն... ածուխը պատրաստեցի, կրակը վառեցի, արծարծեցի, իպրիքը մաքրեցի, ջուրը տաքցուցի, հիմայ ալ կարգն է որ աղամ ու մէջը լեցնեմ ու եփեմ... Ամէն բան կարգա՜ւ, օրինաւո՞ր ի՞ր դայտային կ'ընեմ. հիմա՜յ, հիմա՜յ. (դուրս կ'ելլէ)։

Պետրիկ. — Սողոմոն Աղա, ես կը տեսնեմ՝ որ դուն ծառաներդ կրթելու տեղ՝ իրենք զքեզ համբերութեան կը կրթեն... Մինչև որ Կրպօն խահուէն եփէ ու բերէ, մենք ատեն կ'ունենանք, ապահով եղիր, մեր հաշիւները քննելու և վերջացնելու...

Սողոմոն թղթերը կը բանայ և կու տայ Պետրիկ էֆէնտիի ձեռքը. մինչդեռ սա կը զննէ, ներս կը մտնէ Կարօն, վերնազգեստին մէջ ծայրը ձեղքուած ու կախուած։

Կարօ. — Ահաւասիկ, Աղա, կատարեցի ձեր պատուէրը. առաւօտեան բերած ծրարներս փոստան տարի յանձնելու. մարդ չուզեց հոն զանոնք ընդունիլ ու ցրուել, ըսելով՝ որ իրենց պարտքը չէր, այլ ինծի կ'իյնար, քանի որ մէյմը զանոնք փոստայէն առեր էի... Մտածեցի որ որչափ շուտ ընեմ՝ այնչափ աւելի թէզ կը պրծնիմ. հարկ եղաւ փոստաճիւթիւն ընեմ, քաղքին մէկ ծայրէն միւսը քալեմ, յանձնեմ ծրարները իրենց հասցէին։ Դառնալուս՝ երբ մեր դռնէն ներս մտայ և շուտով վեր վազեցի՝ քեզի իմաց տալու, զգեստիս կոճակին ծակը՝ դրան անիծած չըղկին հանդիպեցաւ, ու ճա՜թ տէյի ձայնը լսելուս՝ տեսայ որ ճոթը կախուեր էր... Մեղք, դեռ անճախ շաբաթ մը կայ՝ որ չինել տուեր էիր, Աղա...

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛ բան մը չես կրնար ընել՝ առանց զեան մը հասցընելու...

ցեր եմ։ Գիտես՝ որ քեզի տուած աղջկանէս զատ՝ ուրիշ զաւակ չունիմ. ասոնց վրայ գութ ունեցեր եմ, զիրենք կրթել կ'ուզեմ... Պակասաւոր են, այդ ես ալ գիտեմ, ախըր ամէնքս ալ մէյմէկ պակսութիւն ունինք. բայց մարդիկ իրենցը կը մոռնան, ուրիշինը կը տեսնեն... Անագարտոր փիլիսոփային ըսածն է. «Աստուած զէմպիլով մարդուս պակսութիւնները կոնակէն կապեր կախեր է»... որով միշտ ուրիշինը կը դիտէ՝ իր կրնակինը չի տեսներ... Բայց սա խահուէն դեռ չեկաւ... (Դէպ ի դուռը կը կանչէ) Կրպո՜, շուտ ըրէ, բեր խահուէն...

Կրպո. — (դրսեն) Աղա, համբերութիւն ըրէ քիչ մ'ալ, հիմայ, շուտով...

Սողոմոն Աղա. — Ը՜օ մէկ սահաթ եղաւ՝ ի՞նչ կ'ընես... օ՜ֆ, ամա՜ն...

Կրպո. — (ներս մտնելով) Աղա, խահուէն չէ, քէրոով կ'ուզես թէ սատէ։

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛ հարիւր անգամ չիներ ես, չե՞ս գիտեր որ թէ՛ ես և թէ Պետրիկ էֆէնտին խահուէն անուշ կը խմենք...

Կրպո. — Լա՜ւ, լա՜ւ, միտքս եկաւ, չէքէրով կը խմէք. (կ'երթայ դարանի մը կը հանի ջաղացը)։

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛, Ջաղացն ի՞նչ պիտի ընես հիմայ։

Կրպո. — Աղա, խահուէն աղալ պէտք է։

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛, դու գնա հիմայ եփածդ բե՛ր, վերջը աղալիքդ գնա աղա...

Կրպո. — Աղա, համբերութիւն, հիմայ, հիմայ. կ'աղամ կ'եփեմ ու կը բերեմ, հիմայ հիմայ (երթայով դէպ ի դուռը)։

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛, եփելիքդ դեռ նո՞ր պիտի աղաս, նո՞ր պիտի եփես... Ը՜օ՛, մինչև հիմայ ի՞նչ կ'ընէիր, սահաթ մ'է որ ըսեր եմ քեզի խահուէ մը չինես...

Կրպո. — (դրսեն առջեւեն) Աղա, համբերութիւն... ածուխը պատրաստեցի, կրակը վառեցի, արծարծեցի, խլրըքը մաքրեցի, ջուրը տաքցուցի, հիմայ ալ կարգն է որ աղամ ու մէջը լեցնեմ ու եփեմ... Ամէն բան կարգա՛ւ, օրինաւո՛ր իր դայտային կ'ընեմ. հիմայ, հիմայ. (դուրս կ'ելլէ)։

Պետրիկ. — Սողոմոն Աղա, ես կը տեսնեմ՝ որ դուն ծառաներդ կրթելու տեղ՝ իրենք զքեզ համբերութեան կը կրթեն... Մինչև որ Կրպօն խահուէն եփէ ու բերէ, մենք ատեն կ'ունենանք, ապահով եղիր, մեր հաշիւները քննելու և վերջացնելու...

Սողոմոն թղթերը կը բանայ և կու տայ Պետրիկ էֆենտիի ձեռքը. մինչդեռ սա կը գնէ, ներս կը մտնէ Կարօն, վերնագգեստին մէջ ժայրը ձեղքուած ու կախուած։

Կարօ. — Ահաւասիկ, Աղա, կատարեցի ձեր պատուէրը. առաւօտեան բերած ծրարներս փոստան տարի յանձնելու. մարդ չուզեց հոն զանոնք ընդունիլ ու ցրուել, ըսելով՝ որ իրենց պարտքը չէր, այլ ինծի կ'իյնար, քանի որ մէյմը զանոնք փոստայէն առեր էի... Մտածեցի որ որչափ շուտ ընեմ՝ այնչափ աւելի թէզ կը պրծնիմ. հարկ եղաւ փոստաճիութիւն ընեմ, քաղքին մէկ ծայրէն միւսը քալեմ, յանձնեմ ծրարները իրենց հասցէին։ Դառնալուս՝ երբ մեր դռնէն ներս մտայ և շուտով վեր վազեցի՝ քեզի իմաց տալու, զգեստիս կոճակին ծակը՝ դրան անիծած չըզկին հանդիպեցաւ, ու ճա՜թ տէյի ձայնը լսելուս՝ տեսայ որ ճոթը կախուեր էր... Մե՜ղք, դեռ անճախ շաբաթ մը կայ՝ որ չինել տուեր էիր, Աղա...

Սողոմոն Աղա. — Ը՜օ՛ բան մը չես կրնար ընել՝ առանց զեան մը հասցընելու...

Կրպо. — (ներս մտնելով) Աղա՜, շաքարամանն ո՞ւր տեղ է...

Սողոմոն Աղա. — Ը՜ո՛, յիմար, շաքարամանն ինձի՞ պիտի հարցընես, ե՞ս պիտի գիտնամ թէ ո՞ւր տեղ է. ծո՛ քու գործդ է, ամէն օր դուն կը դնես կը վերցընես... չուտ գտիր...

Կրպо. — Աղա, ներէ, համբերութիւն... միտքս ինկաւ, ինա տօլպին մէջ դրեր եմ. (կ'երթայ կը հանէ)... համբերութիւն, հիմայ հիմայ. (դուրս կ'ելլէ)։

Պետրիկ. — Էֆէնտիմ, այս հաշիւները ամէնքն աէ լաւ գրեր ու կարգի դրեր ես... միայն ձմեռուան փայտի ծախքը չեմ տեսներ խարճին մէջ նշանակուած...

Սողոմոն Աղա. — Էֆէնտիմ, ձմեռուան փէտը ամէն տղայ իրենց տունէն կը բերէին... ու այնքան շատ բերին՝ որ փիլաւի պէս միշտ կրակը մանկալին մէջ պատրաստ ըլլալէն զատ, կէս մ'ալ աւելցաւ, և իմ տանս համար ալ անկից գործածեցի։

Կրպо. — (դռնէն) Աղա, խահուէն մեծ ֆինճաններով բերեմ թէ պզտիկներով։

Սողոմոն Աղա. — (հառաչանօք) Օ՜ֆ, աման... ծо թէզ ըրէ մեծերով բեր (Կրպо կ'ելլէ)... Չեմ գիտեր ինչ ընեմ... Կարօյին ըսեմ՝ «Գնա՛ խահուէն բեր» (Կարо դէպ ի դուռը կը վազէ, Սողոմոն կ'արգելուռ)... Չէ՛, չէ՛, գլխուս անշուշտ ուրիշ փորձանք մը պիտի բերես, եփածն ալ կրակին մէջ պիտի թափես, որով հարկ պիտի ըլլայ նորէն կրակ պատրաստել... Ը՜ո՛, Կրպо (դէպ ի դուռը) դեռ չեղաւ, ինչո՞ւ չես բերեր...

Կրպо. — (դրսէն) Հիմա՜յ, հիմա՜յ... համբերութիւն քիչ մ'ալ...

Սողոմոն Աղա. — Ներէ, Պետրիկ էֆէնտի, փայտին վրան էր խօսքերնիս, ըսի որ աւելցածը տանս համար գործածեցի. բայց չկարծես որ

ձրի առի վարժատնէն, այլ իրեն գնովը, տես հոս նշանակեր եմ մուտքին մէջ...

Կրպо. — (դռնէն) Աղա, խահուէն շատ տաք է, կ'ուզե՞ս քիչ մը պաղեցնեմ...

Սողոմոն Աղա. — (զայրացած) Օ՜ֆ, ամա՛ն... Տէր Աստուած, համբերութիւն տո՛ւր՝ որ կիրք չելլեմ... Ը՜ո՛. ինչպէս որ է հիմայ՝ գնա այնպէս բեր. չո՜ւտ...

Կրպо. — (դռնէն) Հիմա՜յ, հիմա՜յ, ամէն բան իր զայտայրն... (կը մեկնի)։

Սողոմոն Աղա. — (սիկար մը տալով Պետրիկի հատ մ'ալ իւրը բռնած) Ը՜ո՛, Կարо, քիպրիթը վառէ՛. (Կարо այնքան արագութեամբ ղուցկիի տուփը կը բանայ՝ որ մէջինները կը թափին գետին)... Նայէ՛, նայէ՛... ինչ քանի ձեռք զարնես՝ զեան մը պիտի հասցընես... (Արագութեամբ ժողովելը և տուփին մէջ գետեղելը մեկ կ'ըլնի)։... Տե՛ս, Պետրիկ էֆէնտի, ի՜նչքան ալ չափուք չափուք կը ժողուրուտէ... (Կարо կը սկսի վառել՝ յետքանի մը հատ վառել-ու-մարելու զուր տեղ) Ը՜ո՛, կամաց չարժէ թեւդ՝ որ չմարի...

Կրպо. — (ներս կը մտնէ. ձեռքը սկաւառակ մը և վրան՝ խահուէի լեցուն իսրոբք մը. գետին կը դնէ. արուռակ մը կը բերէ, և վրան կը գետեղէ բերածը՝ Սողոմոնի մօտիկ)։

Սողոմոն Աղա. — Ը՜ո՛, ո՞ւր են ֆինճանները...

Կրպо. — Աղա, երէկ իրիկուն կատուները թէփսին վար ձգեր են մութլախին մէջ, ֆինճանները ջարդուփշուր կոտրուեր են... երթամ մօտի խանութէն քանի մը հատ գնեմ...

Սողոմոն Աղա. — (բարկացած) Ը՜ո՛, յիմար, ծոյլ, անպիտան, մինչև հիմայ խելքդ ո՞ւր էր... կէս ժամ ալ պիտի պէքլէյենք որ երթաս ֆինճան գնես. արդէն եփած խահուէդ պիտի պաղի... Կարо, քեզ տեսնեմ, չուտ ըրէ՝ դու գնա քանի մը ֆինճան մօտի խա-

նութէն գնէ բեր... (Կարօ դուրս կը բռնի)... ծօ՛, կամաց...

Պետրիկ. — Մինչև որ Կարօն գայ, Սողոմոն Աղա, մենք այս թղթերը կարգի դնենք՝ իրենց շարքին, վրան ալ մատիտով յախամներ դիր որ կարգը չշփոթուի. հիսապին ըսելիք չկայ. ժողովքին կրնայ հանուիլ...

Կը լսուի դիրքոտց մը ոտքերու, դռնեն ներս կը վազի Կարօ՝ թեփսիի մը մէջ ֆինձանները բռնած, և արագուրեանեն ոտքը կը սահի՝ թեփսիին ձեռքեն կ'իյնայ. ֆինձանները կը կոտրին. ինքն ալ վար կ'իյնայ և ինկնալու ատեն՝ աթոռակին կը զարնուի, որ վար կ'իյնայ, և վրայի իպրիքին մէջի խահուրեն ալ կը թափի Սողոմոնի ձեռքին վրայ՝ որ կը ծռի Կարօն բռնելու, ու խահուրեն ձեռքին վրայ թափուելով՝ ձեռքը կը տաղուի)։

Սողոմոն Աղա. — Օ՜ֆ, ամա՜ն, ամա՜ն ձեռքս տաղուեցա՛ւ եռացած խահուրէն վրան թափեցաւ... Ծօ՛ շուտ ըրէ, Կրպօ՜, գնա բժիշկը կանչէ (Կրպօ կը մեկնի)... Մինչև որ բժիշկը գայ՝ շուտ ըրէ Կարօ, վազէ՛ էգաճիէն օծանելիք մը բեր, որ այրուցքը անցընէ... օ՜ֆ, չեմ դիմանար. խահուրէն վազ անցանք. (Կարօ խենթաբար դուրս կը բռնի և սանդուղներեն վար գլորելով՝ ոտքը կը ջախջախի. դիրքոտցի և ձայնու ձչելու ձայներ դուրսեն... Սողոմոն՝ Պետրիկի օգնութեամբ լար մը պրլելով իր ձեռքին, դուրս կը դիմեն, և կէս մը վեր բռնած՝ քաշքըշելով տեսարանի կը բերեն Կարօն, որ ցաւեն կը հեծեծէ)։

Սողոմոն Աղա. — Ահաւասիկ քու խենթաբար վազվռտելուդ հետեւանքն... իմ ձեռքս տաղուած, քու ոտքդ ջախջախուած... ծօ՛, կո՞յր

էիր, սանդուղները չտեսա՞ր... ծօ՛, ոտքիդ տեղ գլուխդ քարերու զարնուէր ու ջախջախուէր՝ ի՞նչ պիտի ընէիր...

Դրսեն կը լսուի խառնաշփոթ աղաղակ մը բազմուրեան մարդկանց, և բիչ վերջը քանի մը հոգի ներս կը մտցրնեն Կրպօն՝ բեռներուն վրայ բռնած, որ կը հեծեծէ։

Տէ՞ր Աստուած... Ի՞նչ կը տեսնեմ... ծօ՛ քեզի ինչ փորձանք հանդիպեցաւ...

Բերողներեն մէկը. — Էֆէնտիմ, այս մարդը դանդաղ դանդաղ ճամբան կ'երթար. անդիէն երկաթի կառք մը՝ չկրնալով ինքզինքը սանձել, կառավարը հեռուէն կը պոռար՝ որ ճամբին մէկ կողմը քաշուի... ինչուան որ քաշուելու շարժում ըրաւ՝ կառքը վրայ հասաւ... ինքը տակը մնաց և մէջքն ու կողը ջախջախուեր է...

Պետրիկ. — Սողոմոն Աղա, կարճ ըսեմ. դուն ալ, այս յիմար ծառաներդ ալ՝ մէկ վայրկենի մէջ դասերնիդ առիք... Հազար անգամ քեզի ըսեր եմ. վազ եկուր սա չըլլուելիք բաներն. սա բնութեամբ յիմար և ծոյլ անուղղայ ծառաներդ կրթել ուզելու գործէդ... Անշուշտ ասկէց վերջը խելքդ կը պառկի ըսածիս, ու քովէդ կը հանես կը հեռացընես զիրենք, որ օր մը ձեռքդ ու ոտք ու գլուխդ ալ չջախջախեն...

Սողոմոն Աղա. — Իրաւունք ունիս, Պետրիկ էֆէնտի... Ես ալ յիմար եղայ ծառաներուս պէս, որ միտքս դրի պնդագլխութեամբ չըլլալիք բանին հետեւէն ինկնամ, սնոտի պարծանք մ'ունենալու յուսով... Ադամորդի եմ՝ խաբուեցայ. բայց իմ խաբուիլս ու գլխուս եկած փորձանքը՝ մէկ լաւութիւն մ'ունի. այ-

սինքն է՝ թէ անոնք որ հիմայ ներկայ գտնուեցան ինծի հանդիպածին՝ թող իմ գլխուս հասած փորձանքէն օգուտ քաղեն, և չարհամարհեն հասարակաց կարծիքը՝ իրենց կարծիքին հաւնելով. և գիտնան՝ թէ ով որ ի բնէ յիմար է և ով որ ի բնէ ծոյլ է, այնպիսին երբէք չտկուելիք չունի:... Հիմայ, դուք ո՛վ բարի մարդիկներ, առէք այս երկուքն ալ, Կարօն ու Կրպօն, երկուքն ալ տարէք հասարակաց քաղաքիս հիւանդանոցը, ուր իմ ծախքովս զիրենք պիտի հոգամ, մինչև որ բժշկուին... Իսկ անոնց թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական բժշկութեան հոգը ասկէց վերջը Հիւանդանոցին հոգաբարձութեան կը յանձնեմ:

Մինչդեռ մարդիկը կը ժողովին Կրպօյի և Կարօյի չորս դին՝ վերցընելու, վարագոյրը կը փակուի:

Բ

ԵՐԵՔ ՔԱՋԵՐԸ

ԱՆՁԻՆՔ

ՀՐԱՆԴ — Իշխան տանուտէր։
ԳԱՐԵԳԻՆ — Եղբօրորդի Հրանդի։
ԱԼԷՔ — Ծառայ Հրանդի։
ԳԱԼՈՒՍՏ — Խոհարար Հրանդի։
ԴԱՇՏԻ-ԿՈՌՆԱԿ — Ա. Քաջ. Պահապան։
ԼԵՐԱՆՑ-ՓԱՌՆԱԿ. — Բ. Քաջ. Մեռեալ։
ԾՈՎՈՒ-ԶԱՅՐՄԱՅՐ — Գ. Քաջ. Սատանայ։
ՀՐԱՒԻՐԵԱԼՔ ՈՄԱՆՔ — անխօսք։

Տեսարանն է Հրանդի պալատին մէջ։

Ծան. – Այս զաւեշտը խաղերենէ վերածուած է Հ. Ա. Վ. Տիրոյեանէ, հեռաւորութեամբ և շատ տեղ նախ բառերով և բացատրութեամբ Մկրտ. Պէշիքթաշլեանի նոյնանուն կատակերգութեան։

Ա. ԱՐԱՐՈՒԱԾ

Հրանդ. — (տրտում տխուր պտրտելով՝ կը մեկնախօսի)... Ափսոս, ափսոս... որչափ մտածեմ՝ այնչափ սիրտս կ'այրի... ինչպիսի՜ զբաղխտութիւն... դեռ քաջ և կտրիճ հասակի մէջ... և ո՞վ կրնար մտածել թէ ամենուն սոսկումն ու ծարսափը, զարհուրելի Մուշեղը՝ երկու ժամուան մէջ պիտի անշնչանար։ Խե՜ղճ Մուշեղ, մեռնելու վայրկեանին ալ՝ մահուան հետ կը կռուէր և յաղթել կը ջանար։... Սըրտիս տրտմութենէն՝ կարծես գլուխս ալ ծանրացեր է. քիչ մը հանգչիմ... Մուշեղի կորուստը՝ զաւկի մը կորուստէն նուազ չ'արժեր ինծի... Ո՞վ կայ հոն. դո՞ւն ես Ալէք։

Ալէք. — (խոնարհելով) Այո՛, տէր իմ. հրամայեցէք։

Հրանդ. — Ինչո՞ւ եկած էիր։

Ալէք. — Տէր իմ, Ձեր եղբօրորդին Գարեգին իշխանը՝ կը փափաքի զՁեզ տեսնել։

Հրանդ. — Ըսէ՛ թող գայ։ — (Ալէք կը խոնարհի և կը մեկնի)։... Խե՜ղճ Մուշեղ, մահուամբդ իմ կեանքս ազատեցիր... կը մտածեմ ամենաչքեղ թաղում մը կատարել տալ...

Գարեգին. — (կը մտնէ երգելով)

Միշտ ուրախ, միշտ զըւարթ կ'անցնին մեր օրեր, մեր օրեր.
Միշտ կարմիր, միշտ կարմիր փայլին մեր գաւաթներ, գաւաթներ։

Հրանդ. — Է՛հ, է՛հ... Գարեգի՛ն, տխո՞ւր... սգոյ տուն կը մտնես... երգի ժամանակ չէ։

Գարեգին. — Ի՞նչ կայ, սիրելի հօրեղբայր, ինչո՞ւ սգոյ տուն, ինչո՞ւ տխուր... Երէկ քու կեանքդ ազատեցաւ անպիտան աւազակներու ձեռքէն, և ես չուրախանա՞մ, չերգե՞մ, չպարե՞մ... Ո՜հ, պարոն Հրանդ, այս իրիկուն ամբողջ մեր բարեկամները հոս պիտի գան, և ձեր տան մէջ ուրախ զուարթ գիշեր մը պիտի անցնենք... Բայց ի՞նչ կայ, սիրելի հօրեղբայր... տխուր կը տեսնեմ զքեզ... կեանքէդ ձանձրացե՞ր ես։

Հրանդ. — Այո՛, Գարեգին, իմ կեանքս ազատեցաւ. բայց իմ կեանքիս ազատարարը, իմ քաջ ու հաւատարիմ Մուշեղս՝ ինձ համար իր արիւնը թափելով՝ իմ տեղս մեռաւ՝ կռուին մէջ ընդունած վէրքովը... Մէկ կտրիճ Մուշեղ՝ տասնէն աւելի աւազակներու դէմ դրաւ, զիս ազատեց և իմ տեղս մեռաւ... Եւ դու կ'ուզե՞ս, Գարեգին, որ տունս սգոյ տուն չըլլա՞յ...

Գարեգին. — Է՛հ, ըսածդ իրաւ է, հօրեղբայր, մեռնողը շատ քաջ ու հաւատարիմ էր, բայց մեռնելով իր պարտքը կատարեց... Ծառայ մը որ յանձն չառնու իր տիրոջ համար արիւն թափել ու մեռնիլ՝ քանի՞ փարայի արժէք կ'ունենայ... Թող որ ամէն բանի ալ չափը կայ. ծառայի մը մահուան համար պատշաճ չէ որ տէրը սուգ բռնէ, այդքան ցաւի ու տրտմի...

Հրանդ. — Վերջ տուր, Գարեգին, այդ յիմար խօսքերուդ, որ քեզի պատիւ չեն բերեր։ Մի՞թէ լաւ ծառայ մը իր տիրոջը սիրոյն արժանի չէ՞. և ով որ ճշմարտապէս սիրէ՝ նոյն ճշմարտապէս ալ կը ցաւի... Գիտեմ որ դուն ծառաներդ մարդու տեղ չես դներ, զիրենք չես սիրեր, անոր համար իրենցմէ ալ չես սիրուիր։

Գարեգին. — Այդ ի՞նչ խօսք է, հօրեղբայր։ — Ե՞ս ծառան սիրեմ, ծառան զիս սիրէ. ծառան ի՞նչ է որ ես զինքը սիրեմ կամ իրմէն սիրուիլ փափաքիմ... մի՞թէ երգե՞լ, պարե՞լ, զուարճանա՞լ է՝ որ սիրեմ...

Հրանդ. — Այո՛, այդ քու յիմար սկզբունքներովդ է որ դուն բնաւ լաւ ծառայ մը չես ունեցած և հետեւաբար լաւ ծառայի մը յարգը չես գիտեր։

Գարեգին. — Է՛հ, հօրեղբայր, լաւ ծառայ լաւ ծառայ կ'ըսես կ'երթաս... կարծես զիս համոզել կ'ուզես՝ որ ծառային ալ լաւն ու գէշը կայ։ Ամէնքն ալ նոյնպէս են, ծոյլ, յիմար, գող, անիրաւ, խմող... և եթէ մէկը պակի՝ տեղը հազարը կան բռնելու, և ամէնքն ալ մի և նոյն բանը կարող են ընել... Ի՞նչ, ուրեմն միտքդ դրեր ես թէ Մուշեղին տեղը հարիւրաւորներ չկա՞ն որ բռնեն, և դեռ անկից ալ աւելի քաջեր...

Հրանդ. — Մուշեղի՞ն տեղը բռնող... Մուշեղէ՞ն աւելի քաջեր... հա՛, հա՛, հա՛, հա՛... Դուն դեռ փորձառու մէկը չես, Գարեգին, անոր համար չես հասկընար որ Մուշեղին պէս տիրասէր, քաջ, անվախ, հաւատարիմ, երախտագէտ, բարեպաշտ ու աստուածավախ ծառայ մը բնաւ չի գտնուիր։

Գարեգին. — Զի՞ գտնուիր։

Հրանդ. — Զի գտնուիր։

Գարեգին. — Ես նոյն իսկ այսօր հարիւրը գտնեմ քեզի...

Հրանդ. — Պոռոտացողնե՞ր, մեծ մեծ խօսողնե՞ր, խենթե՞ր, չա՜ռ...

Գարեգին. — Զէ, չէ. ճշմարիտ քաջեր... Աչքերէն, բերաններէն, դէմքերէն, կուրծքերէն, ձակատներէն, սրունքներէն, ոտքերէն, ձեռքերէն, քթերէն, լեզուներէն, վերջապէս ամէն մէկ տեղերէն յայտնի ստոյգ քա-

ջեր... Հիմայ, դեռ հոս եկած պահուս՝ երեք հատ հանպիպեցան, և խնդրեցին ալ որ միջնորդեմ քեզի որ Մուշեղին տեղը զիրենք ընդունիս. մէկը միւսէն աւելի քաջ, մէյ մը տեսնես, այնպէս որ Մուշեղը քեզի մոռցընել տան։

Հրանդ. — Է՛հ, կը գուշակեմ. այդ ըսած երեք քաջերդ՝ որ շուկան ծախելու տանիս՝ երեքին երեք ստակի գին չեմ տար ես...

Գարեգին. — Թէ որ տեսնես՝ վստահ եմ որ ամէն մէկուն երեք հազար ոսկի կու տաս...

Հրանդ. — (ծաժուկ). Մտքէս լաւ բան մը կ'անցնի... Այս անփորձ երիտասարդին պէտք է իւր աչքով տեսնել տալ ու ձեռքովը շօշափել տալ... շատ լաւ, շատ լաւ... ընդունիմ։

Գարեգին. — Է՛հ, հօրեղբայր, ի՞նչ կը մտածես, երեք հազար ոսկի՞ն վրայ։

Հրանդ. — Այո՛, այո՛, կու տամ. ո՞ւր են այդ ըսած քաջերդ. թող գան. բարով, հազար բարով... կը հարցընեմ, կը քննեմ, և մէջերնէն ամենէն աւելի քաջը Մուշեղին տեղը կ'ընդունիմ։

Գարեգին. — Ուրեմն ես կ'երթամ, և մարդ կը ղրկեմ իրենց՝ որ քեզի գան. հարցուր, քննէ, տեսնես ի՞նչ կարիճ տղամարդիկ... կարծես մէյմէկ գայլ, վագր, առիւծ նմանին...

Հրանդ. — Մի՞թէ մկան, ճագարի, նապաստակի ալ չե՞ն նմանիր։

Գարեգին. — Է՛հ, կատակը մէկդի, հօրեղբայր... Ես կ'երթամ ուրեմն բոլոր մեր բարեկամները իրիկունս այս տեղ ժողվելու և լաւ ուրախութիւն մ'ընելու... այնպէս չէ՞, սիրելի հօրեղբայր...

Հրանդ. — Այնպէս է, այնպէս։ Ո՛րչափ շատուր գան՝ այնքան մեծ հաճոյք ըրած կ'ըլլան ինծի։ — Աչ՞ք։

Աչք. — Պատրաստ եմ, տէր իմ, ի՞նչ է հրամանիդ։

Հրանդ. — Գլխարկս ու գաւազանս տուր, առջեւս ընկիր։... Պարոն Գարեգին իմացա՞ր. ահա ես կ'երթամ հրաւէրքին համար կարեւոր պատրաստութիւնները տեսնելու, և պէտք եղածն յանձնարարելու ծառայից... իմացա՞ր... (Հրանդ կը մեկնի Աչքի հետ)։

Գարեգին. — Է՛հ, իմացայ, իմացայ... Ի՞նչ ըսեմ. հօրեղբայրս լաւ մարդ է, խելքով մարդ է, շատ հարուստ մարդ է. բայց ես դեռ աւելի լաւ և խելօք եմ, թէպէտ և փող քիչ ունիմ... Պիտի հարցընէք թէ ինչո՞ւ. վասն զի ինքը յիմար է՝ որովհետեւ ծառայ կը սիրէ. իսկ ես իմաստուն եմ որ զուարճանալ կը սիրեմ, ուտել, խմել, պարել, երգել կը սիրեմ, կը սիրեմ, կը սիրեմ, կը սիրեմ... (երգելով կը դարձնցնէ վերջին բառերը և դէպ ի դուռը կ'երթայ, մինչդեռ վարագոյրը կը գոցուի)։

Բ. ԱՐԱՐՈՒԱԾ

Հրանդ. — Եղբօրորդիս միաքը դրած է՝ Մուշեղի պէս քաջ մը՝ օրուան մէջ հարիւր հատ գտնելու... Ես ամէն բան կարգի դրեր եմ. պիտի ցոյց տամ եղբօրորդւոյս և հրաւիրելոց՝ որ հիմակուան իրենք զիրենք քաջ անուանողներն՝ ոչ թէ միայն կենդանի, այլ նաև մեռած մարդիկներէ ալ կը վախեն... մեծ մեծ կը խօսին, խոշոր խոշոր կը ջարդեն, բայց գործի որ գայ՝ լեզունին շուտ կը փոխեն... Իրենց անօթի փորին պատառ մը հաց ճարելու քաջ են, խեղճ մարդկանց վրայ բրոնութիւն ընելու քաջ են, խաբելով խաբիբելով՝ մէկուն միւսին տունը նիւթապէս և համբաւը բարոյապէս կործանելու քաջ են, մարդասէր անուան տակ կեղծուած՝ մարդակեր գործերով քաջ են. ուտելու, խմելու, գինովնալու, անառակութիւններ և աւազակութիւններ ընելու քաջ են, ուրիշ բանի չեն գար:... — Բայց մենք գործերնուս նայինք, ատենը կ'անցնի. բաւական ժամանակ է որ Գարեգինը մեկնած է. գնաց՝ որ քաջերն այստեղ զրկէր, ինչո՞ւ կ'ուշանան գալու...

Ալիք. — (Ներս կը վազէ սարսափահար և շունչ չառած):

Հրանդ. — Ի՞նչ կայ, տղաս...

Ալիք. — (հատկրկնալ) Ո՛հ, դրան առջեւը կեցեր է սոսկալի... աւազակ...

Հրանդ. — Մի՛ վախեր, տղաս, գնա ըսէ թող ներս գայ. (ժամուկ. — Անշուշտ Գարեգինի ըսած քաջերէն մէկն է. տեսնենք):

Ա. Քաջ. (գինովցած, բարձրահասակ, վայրենի շրջողբեանք զարդարուած, բրդի կամ լաստի տարազով) — Ապրի՛ Ձեր տէրութիւնը (խոնարհելով Հրանդի դիմաց):

Հրանդ. — Բարի եկած ես. ի՞նչ կը փափաքիս:

Ա. Քաջ. — Ձեր ողջութիւնը, տէր: — Լսեցի որ ձեր քաջերուն գլխաւորը մեռած է, և ես եկայ խոնարհ խնդիրքս ընելու որ զիս իրեն տեղն ընդունիք:

Հրանդ. — Եթէ քաջ ես՝ շատ լաւ. անունդ ի՞նչ է:

Ա. Քաջ. — Դաշտի-Կոռնակ է անունս, տէր իմ. բայց ի՞նչ նշանակութիւն ունի անունս, գործերս հարցուր՝ որ իմանաս թէ ինչպիսի՞ քաջ եմ, և արժանի եմ քու ծառայութեանդ մէջ մտնելու:

Հրանդ. — Իրաւացի է ըսածդ, ուրեմն ըսէ տեսնեմ քու քաջութիւնդ ի՞նչ բանի մէջ է:

Ա. Քաջ. — Տէր, հարցուցէք մանաւանդ թէ ի՞նչ բանի մէջ չէ, և ես աւելի դիւրաւ կրնամ պատասխանել... Աշխարհս ծովերէ, լեռներէ և դաշտերէ կազմուած է. և ես ալ ծովերու մրրիկն եմ, լեռներու գոռացող ու կայծակող ամպերն եմ. իսկ դաշտի վրայ՝ ինծի հաւասար զօրութիւն՝ ես ինքս եմ միայն. և անոր համար ամբողջ աշխարհք զիս Դաշտի-Կոռնակ կը կանչէ...

Հրանդ. — Ի՞նչ կարող ես ընել դաշտի վրայ:

Ա. Քաջ. — Տէր, մի՛ նախատէք զիս. հարցուցէք թէ ի՞նչ չեմ կարող ընել դաշտի վրայ... Հանեցէք առջեւս՝ ոտքերնէն գլուխ զինուած հազարաւոր աւազակներ. հրամայեցէ՛ք, մէկ վայրկենի մէջ անոնց գլուխները կը թըռցնեմ... Թող գան չարուն ձիաւորներ, հետեցնեմ... Թող գան չարուն ձիաւորներ, հետեցնեմ...

ւակներ, բանակներ. հրամայեցէք, մէկ ժամու մէջ ցամաք դաշտը արեան ծով կը դարձընեմ... Շարեցէք եռեւէ եռև պարիսպներ, ամրոցներ, բերդեր գիւղեր, աւաններ, քաղաքներ, գաւառներ, թագաւորութիւններ. հրամայեցէք մէկ օրուան մէջ անապատ աւերակ կը դարձընեմ... Դեռ քի՞չ է, հրամայեցէք եթէ դեռ աւելին կ'ուզէք՝ պատրաստ եմ կատարելու։

Հրանդ. — Ապրիս. (ժաժուկ. — Իրաւցընէ զարհուրելի քաջ, բայց Գարեգինի նման դիւրահաւատներու համար)... Այդ քաջութիւններդ ժամանակաւ ինձ պէտք պիտի գան և լիուլի պիտի վարձատրուին. բայց այսօր ես քեզի այդ տեսակ հրամաններ չունիմ տալիք. ժամանակին դուն առատ թոշակ պիտի ունենաս. բայց պէտք է որ հիմակուընէ փորձեմ զքեզ ամէն բանի մէջ... ուրեմն ըսէ ինծի՝ կարո՞ղ ես դուն այս գիշեր հսկել մեռելի մը քով...

Ա. Քաջ. — Մեռելի՞ մը քով հսկե՞լ... ի՞նչ ըսել կ'ուզէք, տէր։

Հրանդ. — Այո՛, պարզաբար, մեռելի մը քով հսկել։ Դուն լաւ գիտես որ այսօր մեռաւ մեր քաջ Մուշեղը, որուն տեղը դուն բռնել կ'ուզես։ Մենք սովորութիւն ունինք որ մեռելը 24 ժամ սենեկի մը մէջ կը պահենք թաղելէն առաջ, որ չըլլայ թէ ողջ ողջ թաղած ըլլանք. վասն զի, ինչպէս գիտես անշուշտ, կան տեսակ սեսակ հիւանդութիւններ՝ որ մարդս մեռելի պէս կ'ընեն, և տասը կամ տասնըհինգ ժամերէ վերջը՝ դարձեալ ուշքը վրան կու գայ և կ'ողջընայ... Ուստի կարող ես դու մեր մեռած Մուշեղին քով այս գիշեր հսկել առանց քնանալու՝ մինչև առաւօտ, որ եթէ յանկարծ ողջընայ՝ իմաց տաս ինծի... կարո՞ղ ես... յուսամ թէ չես վախեր...

Ա. Քաջ. — Ես կենդանիներէն չեմ վախեր, մեռածներէ՞ն պիտի վախեմ... ուզածիդ պէս կը հսկեմ, և թէ որ յանկարծ ողջընայ՝ կը սպասնեմ, թէ որ այդ է ձեր փափաքը...

Հրանդ. — Ուրեմն շատ լաւ, թող այդպէս ըլլայ... Ա՛ռէք...

Ադէք. — (վախ ցուցնելով քաջին). Հրամեցէք, տէր։

Հրանդ. — Գնա՛, խոհարար Գալուստն այստեղ կանչէ։ (Ադէք կ'ելլէ, և ներս կը մտնի Գալուստի հետ). — Գալուստ, տար այս քաջը խոհանոցը, լաւ կերցուր ու խմցուր. յետոյ դուն, Ադէք, տար զինքը առանձին սենեակ մը դիր. և երբ հրամայեմ՝ ձայն տուր իրեն որ ինծի գայ։ (Գալուստ և Ադէք կը մեկնին)։

Ադէք. — (ժաժուկ). Ո՛հ ինչ սոսկալի մարդ. կը վախեմ հետն երթալէ, բայց ինչ ընեմ, հարկ է հնազանդիլ։

Հրանդ. — Ահա քաջերէն մէկը տեսանք, գործս շատ լաւ է. հիմայ տեսնենք միւսներն երբ պիտի գան։ Պահապանը գտանք. խնդիրը լաւ մեռել ձեւացընող մը գտնելն է... Ա՜հ, իրաւցընէ, իրաւցընէ. այս իրիկուն կ'ուզեմ ցուցնել եղբօրորդւոյս թէ պարծենկոտներն ինչ կ'արժեն. և վստահ եմ որ պիտի յաջողիմ... Դուռը կը զարնուի, անշուշտ ուրիշ քաջ մ'է։

Ադէք. — (Ադէք անիսօս ներս կը վազի, խնտալեն մարելով և մատով կը ցուցնի դուռը. որուն առջև կայնած է քաջ մը, խրոխտ դիմքով ադյանդակօրեն հագուած, հատապոր, ձոկան մը ձեռքը. քրդի տարազով)։

Հրանդ. — (առ Ադէք) Հասկըցայ, հասկըցայ. գնա, երբ պէտք ըլլայ՝ զքեզ կը կանչեմ։ — (Ժաժուկ. — Ի՜նչ այլանդակ կերպարանք. տեսնենք. կարծեմ ասկէց աւելի լաւ մեռել ձեւացընող չէ կարելի գտնել)։ — (Առ Քաջն) Արի՛ ներս, ո՛վ քաջ, արի՛ ներս. ինչո՞ւ դրան քով կեցեր ես։

Բ. Քաջ. — (խոնարհելով այրանդակօրեն) Կեցցէ քո տէրութիւնդ, իշխան. լսեցի (կակազելով պիտի խօսի) որ ձեր քաջը, Մուշեղը...

Հրանդ. — Այո՛, հասկըցայ ինչ պիտի ըսես. դուն կ'ուզես Մուշեղին տեղն անցնիլ, այնպէս չէ՞...

Բ. Քաջ. — Եւ ո՞ր քաջն, իշխան, ձեզի պէս մարդուն ծառայել չի՞ փափաքիր... ձեր ծառաներն ամէնքն ալ լաւ թոշակ ունին, լաւ կ'ուտեն, կը խմեն, ուստի ես ալ ինծի պարծանք կը համարիմ...

Հրանդ. — (ժպտելով. Հասկըցայ, քաղցածին մէկն է. խեղճը քաջ է եղեր իր փորը հասցնելու)... Լաւ, լաւ. հասկըցայ, թէ որ ինծի ծառայութիւն ընես, ու լաւ թոշակ ուտես ու լաւ ուտես խմես (Բ. Քաջը գլխով հաւանութեան նշաններ կ'ընէ)... Բայց դուն ի՞նչ կարող ես ընել:

Բ. Քաջ. — Ամէ՞ն բան, ամէն, ամէ՞ն բան. բան չկայ որ ձեռքէս չգայ, բան չկայ որ Լերանց – Փառնակին անկարելի ըլլայ... այո՛, ամէն շրջակայ լեռներն ինձ այնպէս ծանօթ են՝ ինչպէս հովուի մը իւր ոչխարներուն գլուխները: Զինացուց սարսափն եմ, ճափոնացուց գլուխ կտրողը, Հապէշներու արիւն ծծողը, Աստրիներու հոգին հանողը, Հրեայներու կայծակն, Ֆռանկներու կրակը, Ինկիլիզներու բոցն, ամէն ազգի տունն ու բոյնը աւերողը, քանդողը, տապալողը, ոչընչացնողը...

Հրանդ. — Ես աշխարհս կործանել չեմ ուզեր, որ քեզ իմ ծառաս ընեմ. ես իմ կեանքս միայն ապահովելու համար է որ...

Բ. Քաջ. — Տէր, քու կենացդ հետ միացուր հարիւր հազարներու ալ կեանքը, և անոնց ապահովութիւնն ինծի յանձնէ, և պիտի տեսնես որ ճանճ մ'ալ պիտի չկարենայ մօտենալ...

Հրանդ. — Ապրիս, ապրիս... դու շատ քաջ ես,

քեզի շատ լաւ բաներ պիտի յանձնեմ ապագային... բայց հիմայ մէկ բանի մը մէջ կ'ուզեմ փորձել քու քաջութիւնդ և ճարտարութիւնդ... Կրնա՞ս մեռել ձեւանալ:

Բ. Քաջ. — Մեռե՞լ ձեւանալ... ի՞նչ ըսել կ'ուզէք... Լերանց – Փառնակը միայն մեռցընել գիտէ, մեռնիլ չի գիտեր... ոհ, մեռնի՛լ, անկարելի՛ բան:

Հրանդ. — Ուրեմն դուն չես կրնար ամէն բան ընել...

Բ. Քաջ. — Զէ, տէր իմ, չէ, սխալեցայ, ի՞նչ կ'ըսեմ... չէ, ինծի համար անկարելի բան չկայ. եթէ կը հրամայէք՝ կրնամ նաև մեռել ձեւանալ, բայց այն պայմանաւ՝ որ մեռած ժամանակս ալ ուրիշները սարսափեցնեմ, դողցընեմ, մեռցընեմ...

Հրանդ. — Ապրիս... ճիշդ իմ ուզածս ալ այդ է: Գիտցիր որ քեզմէն առաջ ուրիշ մ'ալ եկաւ Մուշեղին տեղն անցնելու. և ես իրեն յանձնեցի որ այս գիշեր Մուշեղի դիակին քով պահպանութիւն ընէ՝ մինչև առաւօտ... Հիմայ դու լաւ կը հասկընաս որ Մուշեղի տեղը բռնողը կամ դուն պէտք է ըլլաս կամ պահապանը, ուստի պէտք է որ դուն Մուշեղին տեղ մեռել ձեւանաս, և քեզի կը թողում ինչ կերպով վախցընել ու փախցընել պահապանդ, որ...

Բ. Քաջ. — Օ՛հ, օ՛հ, օ՛հ. մէկ հատիկ բան ինծի համար. կատարելիք դերս լաւ ըմբռնեցի, արդէն չահս այդ բանին յաջողութեան մէջն է. այնպէս ընեմ որ անպիտան պահապանս վախէն մեռնի ու ալ չարթննայ:

Հրանդ. — Շատ լաւ... Ահէ՛ք:

Ահէք. — Ահաւասիկ եմ, պատրաստ ձեր հրամանին:

Հրանդ. — Տա՛ր այս քաջն ալ խոհանոցը. լաւ կերուխում մը թող ընէ. և յետոյ տա՛ր զինկերուխում մը թող ընէ. և յետոյ տա՛ր զին-

քը ուրիշ սենեակ մը դիր, և թող հոն մնայ՝ մինչև որ կանչեմ։ (Կը ժռին և դուրս կ'ելլեն. քաջն՝ ուրախուրեան ցոյցեր տալով՝ որ շաւ պիտի ուտէ ու խմէ, իսկ Ագէն՝ քաջին ժամուկն ընելով ետեւեն քալելու ատեն)... Ո՜հ, գործս շատ յաջող կ'երթայ. հիմայ պէտք է այս երկուքին մէջ սատանայ մ'ալ մտցընել որ բանը չտկէ՝ ինչպէս որ հարկն է։

Գ. Քաջ. — (դրսեն նախ կռուելու ձայներ կը լսուին, Հա, Զէ՛, Կրողը տանի, և այլն, դէմ առ դէմ բացագանչուրիւններով. և յետոյ կը լսուի ռեվոլվերի մը պարպուիլն. և սուր ձայնով վիրաւորուածի մը ձչելն, և Գ. Քաջին կրիւը և բանուրեամբ ներս վազելը հնքիրմեն դուրս ելած, և գոչելով)... Անըզգամ, յիմար, անխելք, չընքիթ, իշու գլուխ... այդչափ ալ համարձակի՞... ո՞վ է այդ անիրաւն... կը հասկըցնեմ իրեն... վիրաւորելս բան մը չէ, փախա՛ թէ չէ կը սատկեցնէի... (Հրանդ՝ քաջին երրեւեկին հանդիպելն՝ հեռուեն կը շարժի վախի ենթարկուած և զգուշանալով Քաջին պատահելէ. իսկ Քաջը երբ զինքը կը տեսնէ՝ մեկեն կը զգաստանայ, և ժռելով Հրանդի առջև՝ կ'ըսէ). Ներեցէք, իշխան, չտեսայ զձեզ, բարկութենէս կուրցեր էի... Ձեր ամենախոնարհ ծառան եմ։

Հրանդ. — Ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ հարուած էր, որո՞ւն դէմ...

Գ. Քաջ. — Ձեր տէրութիւնն ողջ կենայ... Անզգամ, յանդուգն ու յիմար խնլուտին մէկը ձեր դրան առջև կ'ուզէր զիս սպասեցընել, մինչև որ զար ու ձեզի իմացընէր իմ գալս... բայց քաջ Ծովերու-Զարմայրն, չէ՛, չէ կարող սպասել, նոյն իսկ թէ որ թագաւորին առջեւն ալ ելլելու հարկ ըլլայ։

Հրանդ. (ժպտուկ. — Աս ալ մեծախօսին մէկն է, տեսնենք)։

Գ. Քաջ. — Հա՛, հա՛. թէ միւս աշխարհն ալ երթամ՝ հասած վայրկենիս պէտք է ներս մըտնեմ, արքայութիւն՝ արքայութիւն, դժոխք՝ դժոխք... վայ անոր որ զիս յանդգնի սպասեցնել... Բայց խնդրեմ ներեցէք, տէր, ես եկեր էի որ ձեր մեծութեան...

Հրանդ. — Ի՞նչ կ'ուզես ինծմէն։

Գ. Քաջ. — Տէր, չեմ կրնար բացատրել թէ ինչպէս կը փափաքիմ որ ձեր իշխանութիւնն իմ ծառայութիւններս ընդունէր Մուշեղի տեղը...

Հրանդ. — Բայց Մուշեղը գիտե՞ս ով էր. նա ճշմարիտ քաջ էր, արժանաւոր...

Գ. Քաջ. — Բայց դուք, տէր, գիտէ՞ք արդեօք ես ալ ով եմ. գիտէ՞ք որ ես ալ ճշմարիտ քաջ Ծովերու-Զարմայրն եմ, և արժանաւոր եմ ձեզի ծառայելու։ Իմ քաջութիւններս թող պատմեն ձեզի երկինք, երկիր, դաշտ ու ծով, լեռ ու ձոր։ Երկիրս կը դղրդի, կը թընդայ, կը դողայ, երբ յաղթական քայլերս զինքը կոխկրտեն։ Երկինքն ալ ձեռքէս ազատ չէ. հինգ փարսախ հեռուէն որ զիս տեսնեն հրացանով՝ ամէն թռչունները կը թողուն կը փախչին... կը փախչի՞ն... հէ՛, հէ՛. ո՞ւր փախչին... թռած ատենին գնդակներէս հարուածեալ գետին կը թօթափին կարկտի նըման։ Բանի՛ քանի՛ անգամ ամպերը վրայէ վրայ դիզուած՝ շռալով շռալով անձրև թափած ատեն, թնդանօթի հարուածէ մ'աւելի զօրաւոր ձայն հանելով՝ բոլոր ամպերը ցրուեր եմ, արեւի ճառագայթները շողացնելով երկրիս վրայ։

Հրանդ. — Թէ այդպէս է՝ պէտք էր որ Երկնից-Զարմայր ըլլար անունդ և ոչ թէ Ծովուց-Զարմայր...

Գ. Քաջ. — Ներեցէք, տէր. ես իրաւամբ Ծովուց-Զարմայր ըսուած եմ, որովհետև ծովերու վրայ չունիմ ինձ հաւասար մէկը... Զուկ

չկայ՝ որ ինծի չափ կարենայ լող տալ. նաև չկայ՝ որ ինծի չափ կարենայ երագ երագ ալիքները պատռել անցնիլ... չորս անգամ Սև ծովը լողալով կտրեր անցեր եմ մրրիկներու ժամանակ՝ ծայրէ ծայր, և մրրիկ հանողն աւելի ես էի՝ քան թէ քամին... եօթն անգամ մրրիկներու սատանան ծովէն փախուցեր եմ՝ հետը կռուրտելով...

Հրանդ. — Ո՛հ, ո՛հ... սատանայի՞ հետ ալ կռուեր ես... ուրեմն դու սատանայ կրնաս ձեւանալ...

Գ. Քաջ. — Էհէ՛... սատանան շատ անգամ իր սատանութիւններն ինծմէ դաս կ'առնէ... Կ'ուզե՞ս հիմայ այնպէս սատանայ մ'ըլլամ՝ որ դուն ալ վախես...

Հրանդ. — (ծածուկ. Դեռ ի՞նչ կ'ուզեմ աւելի. մէկ հատիկ փնտռածս գտայ)... Չէ, չէ, հիմայ չէ. բայց կրնաս այս գիշեր սատանայ ձեւանալ, և Մուշեղի դիակին քով հսկող պահապան քաջի մը՝ որ Մուշեղի տեղ կ'ուզէ անցնիլ քեզի նման՝ սիրտը վախ ու սարսափ ձգես ու փախցընե՞ս...

Գ. Քաջ. — Չէ թէ փախցընել, այլ վախէն հոն չորցընել։

Հրանդ. — Շատ լաւ։ — Ա՛էք։

Ագէք. — Հրամեցէք, տէր իմ (խոնարհելով)։

Հրանդ. — Այս քաջն ալ խոհանոցը տար. լաւ կերցուր ու խըմցուր. և յետոյ տար զինքը առանձին սենեկի մը մէջ դիր, մինչև որ ես քեզի հրամայեմ քովս բերելու։ — Հիմկու. հիմայ կարեւոր գործոյ մը համար կ'երթամ, ու քիչ վերջը կը դառնամ. (կ'ելլէ)։

Ագէք. — (առ Գ. Քաջն՝ որ գրաղած է զենելու սենեկի իրեղէններն) Հրամեցէք, պարոն, քաջ... (Ծածուկ առ ժողովուրդն). Մտիկ ալ չ'ըներ... Անիրաւը՝ քիչ մնաց գիս պիտի սպաններ. լաւ որ ռէվոլվէրի հարուածը կաշիս միայն գերծեց ու քովէս անցաւ։... Չեմ

գիտեր ինչ ըսեմ... Այս գիշեր խարաբաղայի գիշեր մ'եղաւ։ Տէրս խելացի մարդ է. այսպէս բռուշաշրդ մարդիկ, քաջեր, բնաւ մօտն եկած չէին, և ինքն ալ չէր թողուր... Բայց ամէն մարդ փոփոխական է, և ամենէն աւելի ծառան. տիրոջ կամքին պէս պէտք է փոփոխուի, թէ որ չէ՝ անօթի կը մնայ... սեւին պէտք է ճերմակ ըսէ, ու ճերմակին ալ սև՝ երբոր տէրն այնպէս կ'ուզէ. զոր օրինակ, ըսեն թէ «Տէրդ կը պնդէր որ էշը կրնայ թռչիլ». ինքը պէտք է ըսէ՝ որ «Ես ինքս շատ անգամ, այո՛, աչքովս ալ տեսեր եմ որ էշը թռեր է»... Ի՞նչ ընեմ. հիմայ ալ պէտք է հնազանդիմ, ու այս աւազակին ալ պատիւ ընեմ, լաւ ըսեմ, քաջ ըսեմ ու առջեւը ծռիմ, նաև ծե՞ծն ուտելէս վերջն ալ... Ա՜խ, անտանելի՜ բան)... Հրամեցէք ուրեմն, քաջ, պարոն, բաց, խան, սարհանգ, սարթիպ, փաշա՛մ, փատիշահըմ...

Գ. Քաջ. — Ի՞նչ կը մըրթմըրթաս, ծո՛ անիրաւ... սպաննե՞մ գքեզ հիմայ... ա՛լ կը հարմարձակի՞ս գիս դրան առջև սպասեցընել. իմացա՞ր թէ ո՛վ եմ...

Ագէք. — (ծնրադիր, աղերսական ձայնով) Ներէ, սխալեցայ, քաջ Զար... Զար... Զահրուն մահը... ներէ կ'աղաչեմ, ուրդ եմ ինկեր...

Գ. Քաջ. — Հա՛, այդպէս. ելի՛ր. ա՛լ չեմ սպաններ. հիմայ տե՛ հայտնի, առջեւս ընկիր՝ երթանք չուտ խոհանոցը, երթանք լաւ գինի մը խմենք մէկտեղ, անով հաշտուինք...

Երգ

Գինի՛, գինի՛, կու տաս հոգի – բիւր անգամ
Կը խմեմ գինին, կը զբաւրճանամ,
Կը խմեմ գինին, կը զբաւրթանամ,
Տրայլայլայլամ, տրայլայլայլամ, տրայլայլայ-
լամ, տրայլայլայլամ։

(Երգելով կը մեկնին, և վարագոյրը
կը գոցուի)։

Գ. ԱՐԱՐՈՒԱԾ

Սենեակ մը սեղերով պատած և տեղ տեղ սեղերուն վրայ ձերմակ գուռնով մեռելի գարդեր ազուռցուած, զոր օրինակ՝ գանկեր, գերանդիներ. մեռելի դիակն հանգչեցնելու համար սենեակի մը՝ սև լարերով պատած, պլպլացող եղի կանթեղ մը՝ նուազող լուսով. երկու աթոռ։ — Դառնան սենեակը կարգի դնելու հետ է, մինչդեռ տերը մտնելով կ'ըսէ.

Հրանդ. — Պատրաստ է ուրեմն ամէն բան։
Ադէք. — Ձեր մեծութեան հրամանին համաձայն՝ պատրաստ է։
Հրանդ. (գնելով) Շատ լաւ է, ապրիս։ Հիմայ գնա՝ սպիտակ պատանք հագցուր և այստեղ բեր մեռել ձեւացնող քաջը. — (Ադէք կը մեկնի) Շատ գոհ եմ՝ որ բարեկամներս բազմութեամբ եկած են, և ծածուկ տեղէ կարող են լաւ կերպով տեսարանը դիտելու... և ի՞նչ տեսարան. ապահով եմ որ պիտի յաջողի... բայց, ահա մեռելն եկաւ։
Մեռելն. — Ծածուկ. — Ամէն բան մոքէս անցած էր, բայց մեռե՛լ ձեւանալ՝ երբեք. ո՜հ, ի՞նչ գարշելի պաշտօն)։
Հրանդ. — (առ Ադէք) Գնա քիչ մ'ալիւր բեր ու երեսին քսէ. (Ադէք կը մեկնի)։
Մեռելն. — Այս է անկողինս. կարծեմ կարճ է,

հասակիս փորձեմ. (չորուրեկեկ կողերուն ցաւ կը զգայ)... Ո՛հ, ո՛հ, ո՛հ... ոսկորներս պիտի ջարդուին... (Կը հասնի Ագէք և երեսը ջուր սրբարկելով՝ ալիւրը կը քսէ տժգունելու համար)... Է՛, է՛. բաւական է. աչքերս ալ ալիւր լցուեցան...

Հրանդ. — Լաւ է. հիմայ հանդարտ երկընցիր դագաղիդ վրայ. (մեռելը կը պարզուի)... Շատ լաւ... Չէ, քիչ մ'աւելի դեռ քամկիդ վրայ դարձիր... ծնկուըներդ երկընցուր փայտի պէս... հա, այդպէս... Ո՛հ, հիմայ շատ լաւ եղաւ... Ես ալ չգիտնայի՝ զքեզ ստոյգ մեռած պիտի կարծէի... Ագէք, հիմայ գնա պահապանը բեր. (Ագէք կը մեկնի). — Նայէ՛ հանգիստ անշարժ կենաս...

Մեռելը. — Հանգի՞ստ... անիծած չոր անկողին... ոսկորներուս ցաւերուն վրէժը պահապանէս պիտի հանեմ։

Հրանդ. — Նայէ՛, երբոր վախցընես փախցընես զինքը՝ այն ատեն միայն Մուշեղի տեղ կըրնաս անցնիլ։

Մեռելը. — Է՛հ, հիմակուընէ արդէն փախցած փախած համարէ այն յանդուգնը և զիս արդէն քու քաջդ։

Հրանդ. — Ամփոփուէ՛, ամփոփէ՛, մի՛ խօսիր... Ահա պահապանդ...

Պահապան. — Այս տեղ պիտի հսկեմ... այս սատակին քով...

Հրանդ. — Այո՛, այստեղ է. ահա մեռելը. բայց նայէ՛ որ արթուն մնաս հա՛... կընայ սատակն ողջընալ ու զքեզ խղդել... Թէ որ յանկարծ արթընայ շուտով ինձ իմաց տաս, այս դուռը զարկ՝ կը բացուի... Գիշեր բարի (կ'ելլեն Հրանդ և Ագէք)։

Պահապան. — Լ՚այս բարի. ապահով եղէք, տէր, ձեր հրամանները կը կատարուին։ — (Կը մօտենայ, վեր ի վերոյ կը դիտէ մեռելին երեսը և քստմնելով՝ շուտ մը կը հեռանայ). Ո՛հ, ինչպէս գարշելի և այլանդակ դէմք ունի, անիծածը... Կ'ըսեն թէ չար մարդիկ մեռնելնէն վերջը միշտ գարշելի կերպարանք կ'ունենան. թէ որ շիտակ է այս բանս՝ ըսել է՝ որ այդ անիծած գարշելիին հոգին՝ ամենէն աւելի չար հոգին պէտք է եղած ըլլայ կենդանութեան ատեն... Այսպէս է, հապա՛... Բաւական չէ որ ողջ ատեննին մարդկանց չարիք վնաս չի մնար չհասցընեն, այլ նաև չորնալնէն վերջն ալ՝ ուրիշին նեղութիւն տալէ չեն դադրիր, ինչպէս այդ գարշելի պարոն Չանդակն ինձ կու տայ այս գիշեր... Մէկ մը մտածէ, Դաշտի-Կոռնակ, դու ո՞վ, այս անիծած Չանդակն ո՞վ. թէ որ ողջ եղած ժամանակն իմանայի՝ որ այսպէս պիտի ստիպուիմ իր սատակին քով գիշեր մ'ամբողջ գիշերապահի պաշտօն կատարելու, ես զինքն առաջուց կը սպաննէի և մարմինը գետը կը ձգէի... Կ'ըսեն թէ շատ շատ քաջ եղած է. արդեօք երիտասարդ մեռած է, թէ տարիքն առած խոցած մէկն է. ո՞հ, այստեղ կեցեր է, դէմքը նայիմ՝ կ'իմանամ... բայց չըլլա՞յ թէ նայելովս՝ սիրտս վախ մը զգայ... Ի՞նչ, ե՞ս վախ զգամ... մանաւանդ թէ վախ չունենալու համար լաւ մը դիտեմ. (կը մօտենայ, կը զննի, ու վախի և զզուանքի ձայնով)... Ո՛հ, գարշելի՜, գարշելի՜, ահռելի՜... Ո՛հ, ինչո՞ւ երեսը նայեցայ, սիրտս պղտորեցաւ... այո՛, կարծես թէ դեռ ողջ մարդու չունչի հոտ կու գար... Է՛հ, յիմա՞ր եմ... ի՞նչպէս կարելի բան է՝ որ քսան ժամուան մեռած մը ողջ մնայ ու նորէն արթընայ... Չէ, սուտ է, չեմ ուզեր հաւատալ... Բայց եկուր նայէ որ երեք օր առաջ մամիկս ալ կը պընդէր կ'երդուըննար՝ որ մեռած մը տեսեր էր կոռնոցի մէջ մերկ մերկ պտըտելով և ոռնա-

լու ձայներ հանելով... Թէ որ ստոյգ ըլլայ՝ իրաւցընէ ի՞նչպէս վախնալու բան է... Բայց մամիկս ստախօս չէ, միշտ ճշմարիտ կ'ըսէ, ինչո՞ւ հիմայ սուտ պիտի ըսէր,.. Ի՞նչ ընեմ, չհաւատամ ըսածին. Թէ որ հաւատամ՝ լեղիս պիտի պատռի ու մազերս պիտի տնկուին, թէ յանկարծ այս գարշելի չանդակն արթընար և պատանքը պատռել ուզէր... (Մեռելը քիչ մ'ատեն կ'երևրայ)... Ո՜հ, աչքիս կ'երեւայ՝ թէ ցնորք մ'է... Ուղեղս տաքցեր է, երեւակայութիւնս բորբոքեր է... Գարշելի՜ բան, ո՞ւր տեղէն ալ իշխանին միտքն ինկաւ այս սատակին մօտ այս գիշեր գիս պահապան դնել... (Կը զնեւ ժամացոյցը)... Այս գիշերս ալ կարծես յաւիտենական է, անցնելիք չունի. ճիշդ ժամը 12 է. և կ'ըսեն ճիշդ կէս գիշերին է որ խօրդրահները գերեզմաններէն դուրս կ'ելլեն... Է՜հ, Դաշտի-Կոռնակ, միթէ խելքդ կորսընցուցեր ես... պառաւներու առասպելներուն պիտի հաւատաս... չէ, չէ, չեմ հաւատար... Հապա, քիչ մ'ալ հետս բերած այս գինիէն խմեմ (կը հանէ գրպանեն գինւոյ սրուակ մը) ամէն վախս կը փարատի, ցնդած խելքս գլուխս կը դառնայ... (վեր բարձրացնելով սրուակը) Է՜հ, գինի՜, գինի՜. դուն աստուածային ըմպելիք ես, վախցողներու քաջութիւնն ես, իմ սրտիս ալ այժ տուր մինչև լոյս, գիս ալ քաջացուր, որ ահա գիշերուան մթութեան հետ կը պատերազմիմ, արթընցող և երերացող դիակներու հետ կը պատերազմիմ... (Կը խմէ մաս մը)... Թող ճնայ կէսն ալ (սրուակը մեռելին մօտ արոռակի մը վրայ կը զետեղէ), վասն զի լուսաբացին դեռ շատ ժամանակ կայ, դեռ գինի պէտք պիտի ըլլայ՝ այժ ստանալու համար... Բայց ո՜հ, այս գինին ալ շատ թունդ է, գլուխս կը զարնէ, աչքերուս վրայ քուն

կը բերէ... Է՜հ, ինչ ընեմ որ արթուն մնամ ու չքնանամ... հապա, երգեմ... գինին լաւ երգի ճամբայ բացեր է. (կ'երգէ տխուր բան մը)... Բայ ցմիս-մինակ երգելէն ալ համ չկայ, մանաւանդ մարդուս քունը գլուխն եղած ատեն... Ո՜հ քաղցր քուն, դուն որ բանտարկելոց ալ մէկհատիկ մխիթարութիւնն ես՝ ինծի համար չե՞ս... Բայց ինչո՞ւ. միթէ ես ալ չեմ կարող քնանալ, հոս մարդ չկայ, ամենքն ալ քնացեր են. ո՞վ կրնայ իմանալ թէ քիչ մ'ատեն ես ալ քնացեր եմ... Շատ լաւ ուրեմն, քնանամ... Բայց թէ որ քնած ատենս յանկարծ այս սատակն արթընայ, ու գիս խղդէ... Է՜հ, ի՞նչ կը վախեմ... ինքն ինծմէ աւելի խոր քնացեր է. կէս գիշերն անցաւ՝ չարթընցաւ, ալ վախ չկայ. քիչ մ'ալ ես հանգչիմ ու քնանամ, աչքերս արդէն բռնի կը գոցուին... Է՜հ... (Կը քնանայ խռխռալով)։

Մեռելն. — (կամացուկ մը կէս մէջքով անկողնեն կը բարձրանայ. քանի մը միմոսայի ձեւեր կ'ընէ իր ոչխարհրեւը ցուցնելու համար. կը խմէ գինին, և սրուակը պինդ մը արոռին վրայ զարնելով կը զետեղէ առաջուան տեղը, և սուր ձիչ մ'արձակելով առաջուան պէս՝ երազգուրեանը մեռած դիրքի մէջ կը մնայ)։

Պահապան. — (սոսկումով վեր կը թռչի արոռեն և վախի ձայներ կ'արձակէ. բայց շուտով ինքզինքը խրախուսելով միշտ անուշադրելով կ'ըսէ)... Զէ՜, չէ՜, մի՛ վախնար, Դաշտի-Կոռնակ, վախնալու բան չկայ, մեռելը առաջուան պէս խոր կը քնանայ... տեսածս երազ էր... բայց, ո՜հ, ինչպէս ալ գէշ երազ. իբր թէ կոռնոցի մը մէջ գտնուած քարի մը վրայ՝ ընկերներուս հետ ժողովուած՝ թուղթ կը խաղայինք. ահա յանկարծ քարը շարժե-

ցաւ, գլորեցաւ. սատակ մը դուրս թռաւ. ընկերներս փախան... անիրաւն իմ ետեւէս ինկաւ, որչափ փախայ՝ չկրցայ ազատիլ... Վզէս բռնեց և քաշկըռտելով տարաւ իրեն խորին մօտ, և ոռնալով՝ մտիր մտիր կը կանչէր, և յանկարծ խփեց գլխիս ու ճիչ մ'արձակելով աներեւոյթ եղաւ... Ես ալ ճիշդ այդ ճիչէն վեր ցատկեցի... Փառք Աստուծոյ, ոչ կոռնոց կայ, ոչ խորդլախ, ոչ վզէս բռնող... ամէն բան իր տեղն է՝ ինչպէս առաջ... Բայց վախէս դեռ պաղ քրտինքը վրայէս կը վազէ... Ո՜հ, ա՛լ չեմ քնանար... շատ գէշ երազ էր, շատ վատ տպաւորութիւն գործեց վրաս... սիրտս կը դփդփայ, ծընկուըներս կը դողան... ատենն է որ քիչ մ'ալ գինի խմեմ՝ քաջութիւնս տեղը բերելու... (Կը տնկէ գինուշոյն սրուակը բերնին վրայ, բայց կը սարսափի և քարացածի պէս կը մնայ՝ պարպուած գտնելով)... Ո՛, այս ի՞նչ է... ով խմեց գինին... մեռե՞լը... (Զորս կողմը կը նայի, և դռները կը զննէ սարսափով)... Ո՜հ, չէ՛... դռները փակուած են... մեռե՞ն ուրեմն արթընցա՞ւ և խմեց մնացած գինին... ո՜հ, բոլորովին ոտքէս գլուխս կը դողամ, ծընկուըներս կը ծալուին... ի՞նչ ընեմ, ա՜խ... դռներն ալ գոց են, չեմ կրնար փախչիլ ազատիլ... Ո՜հ, ի՞նչ կ'ըսեմ, փախչի՛լ... Դաշտի – Կոռնակ, ամո՜թ, ամո՜թ քեզի... դարձեալ պառաւներու ըսածին կը հաւատաս... Բայց, լաւ, ըսենք թէ չհաւատամ... այս գինին ի՞նչ եղաւ... Է՜հ, գիտեմ, գիտեմ, հասկըցայ. երեւակայութիւնս զիս կը խաբէ. խըմեր եմ, բայց մոռցեր եմ... այո՛, այո՛, ուրիշ բան կարելի չէ... ամբողջը խմեր եմ՝ բայց միտք դրեր եմ թէ ամբողջը չեմ խմած, մոռցեր եմ... վախնալու բան չկայ... Ո՜հ, ինչպէս ալ գէշ երազ էր, ամբողջ մարմնովս

դեռ կը դողամ, չեմ կարող ոտքի վրայ կենալ... հարկ է որ նստիմ (մեռելին հեռու կը նստի վախեն)... Ո՜հ, անիծած քունն ալ աչքերէս չի հեռանար, բռնի աչքերս կը գոցուին... Թէ որ քնանամ՝ գիտեմ որ գէշ երազներ պիտի տեսնեմ... Կ'ուզեմ չվախել, բայց ես ինքս չեմ որ կը վախեմ, այլ սիրտս է որ կը վախէ... Անկարելի՜ բան է... որ... դէմ... դնեմ... անիծած քուն... չէ. չեմ քը... նա... նար... չեմ... չէ՜, չէ՜... չէ՜, չէ՜, չէ՜ (Շլելով խոր կը քնանայ)։

Մեռելն. — (ուժով աքացի մը կը զարնէ՝ տապալելով բոլի աթոռակը և վրան դրուած սրուակը, և միշտ կ'երերայ՝ իբրև թէ պատուանքը պատռել ուզի, մկան ու ջղիկի պէս ընդհատ ընդհատ ձչելով)։

Պահապան. — (աղաղակին ու ձիչերին զարհուրած վեր կը ցատկէ, և խենդաբար ինքնիրմեն դուրս եկած կ'աղաղակ՝ պատռ պատռ և դռնէ դուռ զարնուելով. և փախչելու կամօք՝ դռներին մեկուն դեմ բռնուրթիւն ըրած ատեն, յանկարծ դուռը կը բացուի, և ծերուն խոհարարը ոչ կորաբաղակ Գալուստ խոհարարը ներս կը մտնէ, անգիտ բոլորովին մինչև ներս կը մտնէ, անգիտ դարձածին։ Պահապանը պահուն անցած ինքնիրեն զինքը թուեն բռնելով զինքը ներս կը քաշէ, գոչելով)... Ո՜հ, ահա խոհարարն... Արի՛, արի՛, ա՛լ չեմ կրնար... մեռելը, նայէ ողջ է, խօրդ չեմ կրնար... մեռելը, նայէ ողջ է, խօրդ չեմ կրնար... մեռելը, նայէ ողջ է, խօրդ չեմ կրնար... մեռելը, նայէ ողջ է, խօրդ չեմ կրնար...

Խոհարարն. — սարսափած և ստիպ երեսը խաչակնքելով)... Մեռե՞լ, մեռե՞լ... տէր Աստուած... մեռել՝ մը կայ... խօրդ չեմ մը... մեռել՝ մը կայ... խօրդ չեմ մը... ո՜հ, կ'աղաչեմ թող...

Պահապան. — Ի՜նչ թողուլ... այստեղ պիտի մնաս ինծի հետ, թէ չէ՜ կը սպանեմ. լուռ կեցիր... վերջէն ալ մարդու բան պիտի չըսես... թէ որ կեանքդ կը սիրես...

Խոնարարն. — (փախչիլ չանալով) Գոռ ես, ա-
ւազակ ես... ի՞նչ ըրեր եմ քեզի... խնայէ
կեանքիս, գթա վրաս (ոտքը կ'իյնայ):
Պահապան. — Ը՞օ, խե՞նթ ես, ի՞նչ ես... քեզ
սպաննեմ ի՞նչ ընեմ, չորցած կաշիդ ալ բանի
չի գար որ ծախեմ... մինչև լուսաբաց այս-
տեղ ինծի հետ պիտի մնաս, այս իսորդարախին
քով հսկելու, որ չարթննայ ու գիս չխեղդէ
քնոյս մէջ...
Խոնարար. — Ա՛յ, թո՛ղ, մեռե՛լ, իսորդարախ...
թո՛ղ, թո՛ղ...
Պահապան. — Չէ, չեմ թողուր:
Խոնարար. — Թո՛ղ կ'ըսեմ, կրո՛ղը տանի քեզ,
զոհզոհրդական տանի, սատանան տանի...
Պահապան. — Կրողը քեզ տանի, սատանան
քեզ տանի...
Սատանայ. — (բարձրագոյն պատուհանէն մը
ներս կը ցատքի և սուր ձչելով կը վազի պա-
հապանին վրայ չան մը ձեռքը, եղջիւրաւոր
և պոչաւոր, կարմիր և բոցագոյն պատմուռ-
ձանով) — Սատանա՞ն կը կանչես... ահա
հոս եմ... Ա՛յ թշուառական, հոգիդ տո՛ւր...
Խոնարար. — Ո՜հ, սատանան եկաւ, սատա-
նա՞ն... ա՛յ — (կը վազի բատեր վրայ):
Պահապան. — Ա՛յ, սատանա՛ն... (կը վազի և-
տեւէն):
Սատանան. — (կը վազի ետեւէն, և մե-
ռելին գարնուելով մեռելն ալ վեր կը ցատ-
քի գոչելով սարսափահար):
Մեռեալ. — Ա՛յ, սատանա՛ն եկեր է (կը փախչի
վազելով):
Սատանան. — Ա՛յ, մեռե՛լն ողջընցաւ, խորդլա՛խ
է (կը վազի փախչելով): — (Վայրկեան մը
խառնակոտրիւնը կը տիրի բատերաբերմին
վրայ, ձչելու և վախի ձայնելով և իրարմէ
վախելով. վերջը ամենքն ալ լեղապատառ
գետին կ'իյնան, միայնակ ներս կը մնանին

չահեր ի ձեռին՝ Հրանդ, Գարեգին, Ադէք,
և Հրաւիրեալք ունանք, և կը սկսին քրքջ-
ալ ձայն խնդալ քաջերուն վրայ. Հա՛, հա՛,
հա՛, հա՛, և այլն: Քաջերը ծնկան վրայ եկած՝
դէմ առ դէմ, ապշած կը նային իրարու և.
խնուացողաց վրայ, և զիրար կը ձանչնան):
Պահապանն. — Ը՞օ, դուն փառնակն ես:
Մեռելն. — Ը՞օ, դուն Զարմայրն ես:
Սատանան. — Ը՞օ, դուն Կոռնակն ես:
Երեք-Քաջերը. — (կը կանգնին և միաբերան
կը խնուան) Հա՛, հա՛, հա՛, հա՛:

ԵՐԳ

Հրանդ, Գարեգին, Ադէք և Բարեկամք.

Դուք անպիտան քաջեր, և դու սատանայ,
Ձեզ թուք ու մուր վայլեն և ծեծ անխընայ.
Կորէք, թէ չէ՝ պոչերնիդ հոս կը մընայ.
Գացէք դուրս կորէք, մ'երեւնաք երբեք:

Երեք Քաջերը

Ունինք ահեղ պեխեր, մորուք սոսկալի,
Ունինք եղջիւր երկայն, մեծ պոչ սատանի.
Ո՞ւր կորսըւինք. ամէն քաջ մեզ նըմանի.
Եկէք միաբան խընտանք մէկ բերան:

Հրանդ դառնալով առ Գարեգին.

Ուրեմըն սուտ են պարծենկոտ ճառատանք,
Թող հով կըլլեն յիմար չըլթունք մեծաբանք:

Անհնարը միաբերան

Ու մենք ի պար ի կայթ հոս զրուարճանանք.
Եկէք միաբան խընտանք մէկ բերան։

(Պարելով դուրս կ'ելլեն, և վարագոյրը
կը գոցուի)։

Գ.

ԳՈՂՑՈՒԱԾ ՍԱԳԸ

Զաւեշտ երկու Արարուածով.
Թարգմանեց իտալերենէ Հ. Ա. Վ. Տիրոյեան

ԱՆՁԻՆՔ

ԴԱՏԱՒՈՐ կամ ՌԷՍ գիւղի մը։
ԳԻՒՂԱՁԲՕՍ ՄԸ։
ՎՂԱՍ և ԱՄԲՐՈՍ։ — գրագիրներ։
ՍՏԵՓԱՆ։ — պանդոկապետ։
ՓԱՆՈՍ, ՍԱՀԱԿ և ԱՆԴՐԷԱՍ։ — գիւղացիք։

Երկու վկայք. խումբ մը գիւղացի երգիչներ, և չորս անխօս պահակներ։

Ա. ԱՐԱՐՈՒԱԾ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՊԱՆԴՈԿԻ ՄԸ ԳԱՒԹԸ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Փանոս և իւր ընկերակիցները կ'երգեն։

Գիշեր մ'էր այն, մըթին գիշեր՝
Երբ ծածուկ արշաւեցինք,
Ու մըտնելով հաւնոցին մէջ
Բըռնեցինք սագը, հոն է։
Արդ խոհակերն համեմներով
Կարագին մէջ, կրակին վրայ
Լաւ մը կ'եփէ զայն մեզ շուտով. } *կրկ.*
Ո՜հ, ի՜նչ անուշ կը բուրէ։

Փանոս. — (դռնեն դէպ ի ներս խօսելով) Է՜, դեռ երկար պիտի սպասե՞նք հոս, Ստեփան. անօթի ենք. շուտ շուտ եփէ սագը. չըլլա՞յ թէ մամուդ չափ պառուած է...

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Ստեփան և Առաջինները

Ստեփան. — Պարոններ, հրամեցէք բազմելու, սեղանը պատրաստ է։
Բոլորը միասին. — Ապրիս։
Ստեփան. — Ի՜նչ աքանչելի սագ. պիտի տեսնէք. կարագ մ'է որ բերնիդ մէջ կարծես կը հալի... ի՜նչ սագ...
Փանոս. — Ապրիս Ստեփան. կեցցե՜ս։
Ամենքը. — Կեցցե՜ս։
Փանոս. — Կեցցէ՛ սագը։
Ամենքը. — Կեցցէ՛ սագը։
Փանոս. — Երթանք, բարեկամներ, երթանք. սագը մեռած ու տապկուած է... երթանք հանդիսաւոր թաղում մ'ընենք անոր մեր փորերուն մէջ։
Ամենքը. — Երթանք. (պանդոկը կը մտնեն գոչելով) Կեցցէ՛ սագը փորերնուս մէջ։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Սահակ. — Փիչ մը հոս կ'ուզեմ կանգ առնուլ։ Արդէն որ և իցէ լուր հոս պանդոկին մէջ կը լսուի... ամէն վրայ բանի հոս խօսք կ'ըլլայ... բաց ասկէց՝ յայտնի է ամենուն՝ որ երբոր գողերը յաջողութիւն մը ձեռք բերեն, մանաւանդ երբ ուտելու բանի մը վերաբերի, վերջը վերջը պանդոկը կը ժողովին։ Ո՞վ գիտէ թէ ուրեմն ես ալ չյաջողիմ հոս իմանալու ով եղած է այն սրիկան, այն շունչա-

նորդին՝ որ այնքան գեղեցիկ սագս գողցեր է... Սա՛գ մը՝ որ քեզի սագ կ'ըսեմ, տեսնէիր ի՜նչպէս գիրուկ ու սիրուն էր... ութը-տասը քիլօ կը կշռէր... և ես յոյս ունէի՝ առնուազն ութը ինը ֆրանքի ծախելու։... Գո՛ղ աւազակներ... բայց անգամ մ'որ գողնալը իրենց ախտ ըրած են՝ լաւն ու գէշն ընտրել չեն գիտեր, ինչ ալ ըլլայ պիտի գողնան։ Գողե՛ր, սրիկանե՛ր, աւազակնե՛ր... Ա՜խ, թէ մէյ մը իմանայի՝ ով ըլլալնին։ Ես կը տարակուսիմ արդէն այն չանորդի փանոսին վրայ... որ ուտել խմել զուարճանալէ զատ՝ ուրիշ բան չի մտածեր, առանց աշխատիլ ուզելու։... Թէ որ իրաւցնէ ինքն եղած ըլլայ և ապացուցուի՝ գիտեմ թէ ինչ պիտի ընեմ, հետս լաւ գործ ունի...

Ներսէն՝ նախ երգելով և յետոյ

Ամենքը. — Ո՜հ, ինչ սագ... ահա մէջտեղ եկաւ։
Մէկը. — Բաժնենք մէջերնիս։
Ուրիշ մը. — Սրունքը քեզի։
Երրորդ մը. — Թեւն ինծի կ'իյնայ։
Սահակ. — Ա՛յ չանորդիներ, այ սրիկաներ. հոս են. իմ սագս կ'ուտեն. ալ տարակոյս չկայ. աւազակնե՛ր. կերածնիդ փսխել պիտի տամ ձեզի։ Բայց պէտք է տեսնեմ գիրենք որ ճանչնամ ով ըլլալնին. ձայներնին անծանօթ չէ ինծի։ Բայց հարկ է ստուգեմ։

Ներսէն՝ երգելով

Մէկը

Դանկ մը չարժող մեր ուտելիքն
Ախորժակնիս կը բանայ։

Ուրիշ մը

Այս խորոված՝ այսպէս տապկած
վար չ'երթար առանց խումի։

Ամենը

Հապա կենաց այն ապուշին
Խըմենք որ տէրն է սագին։ } 3 անգամ

Սահակ. — Փանոսին ձայնը լսեցի... ալ չեմ տարակուսիր, ա՛լ չեմ կասկածիր... Արդէն գուշակեցի՝ թէ ինք եղած պիտի ըլլայ... Ա՜յ աւազակներ, ա՜յ սրիկաներ... ձրի կ'ուտէք դուք սագս, հա՞... պիտի տեսնէք թէ ձրի՞ պիտի ըլլայ կերածնիդ... պիտի տեսնէք թէ ապո՞ւշ մ'եմ։ — Բայց ժամանակ կորսնցնելու չէ. ուրեմն ի՞նչ պէտք է ընեմ. նախ պանդոկապետին հետ խօսիմ... (կը կանչէ) Ստեփա՛ն աղբար։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Ստեփան և Սահակ

Ստեփան. — Ո՞վ կը կանչէ զիս. հա դո՞ւն ես Սահակ։
Սահակ. — Ըսէ ինծի, Ստեփան աղբար. պանդոկիդ մէջ հոս կը գտնուի՞ն հիմայ խումբ մը երիտասարդներու։
Ստեփան. — Ձիշդ ըսածիդ պէս։
Սահակ. — Փանոսը մէջերնի՞ն է։

Ստեփան. — Կարծեմ թէ այո։
Սահակ. — Ի՞նչ կ'ընեն այստեղ։
Ստեփ. Ինչ որ պանդոկի մը մէջ կ'ըլլուի։
Սահակ. — Այսինքն՝ ի՞նչ ըսել կ'ուզես։
Ստեփ. — Կ'ուտեն, կը խմեն, կ'երգեն, կը զուարճանան։
Սահակ. — Կերածնին ի՞նչ բան է։
Ստեփ. Ի՞նչ բան է կերածնի՞ն... Այդ ի՞նչ հետաքրքրութիւն է. ներս մտիր՝ աչքովդ տես, իմ ի՞նչ պարտքս է քեզի այս բաներուս հաշիւ տալ։
Սահակ. — Հասկըցայ, գող աւազակ մ'ալ դուն ես։
Ստեփ. — Այդ ի՞նչ խօսք է ըսածդ։
Սահակ. — Դու գողերուն թև թիկունք կ'ըլլաս։
Ստեփ. — Խօսքերդ չափէ՝ թէ չէ կը զղջաս։
Սահակ. — Ի՞նչ խօսք չափել, ի՞նչ զղջալ. դուն պիտի զղջաս, լակոտ։
Ստեփան. — Լակոտը դուն ես։
Սահակ. — Այն սագը իմս էր. ինծմէ գողցեր են, և դուն...

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գիւղացիս մը և Առաջիններն

Գիւղացիս. — Գաւաթ մը սպիտակ գինի (առ պանդոկապետն)։
Ստեփ. — Հիմայ. (Սահակին) կը ցաւիմ վրադ, կը ցաւիմ (կը մեկնի)։
Սահակ. — Կը տեսնէք, խարդախ խաբեբաներ... այո՛, պիտի տեսնէ՛ք...
Գիւղացիս. — Ի՞նչ ունիս, բարի՛ մարդ։

Ուրիշ մը

Այս խորոված՝ այսպէս տապկած
Վար չ՚երթար առանց խումի։

Ամենքը

Հ՚ապա կենաց այն ապուշին
Խըմենք որ տէրն է սագին։ } 3 անգամ

Սահակ. — Փանոսին ձայնը լսեցի... ալ չեմ տարակուսիր, ա՛լ չեմ կասկածիր... Արդէն գուշակեցի՝ թէ ինք եղած պիտի ըլլայ... Ա՜յ աւազակներ, ա՜յ սրիկաներ... ձրի կ՚ուտէք դուք սագս, հա՞... պիտի տեսնէք թէ ձրի՞ պիտի ըլլայ կերածնիդ... պիտի տեսնէք թէ ապո՞ւշ մ՚եմ։ — Բայց ժամանակ կորսնցնելու չէ. ուրեմն ի՞նչ պէտք է ընեմ. նախ պանդոկապետին հետ խօսիմ... (Կը կանչէ) Ստեփա՛ն աղբար։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Ստեփան և Սահակ

Ստեփան. — Ո՞վ կը կանչէ զիս. հա՛ դո՛ւն ես Սահակ։
Սահակ. — Ըսէ՛ ինծի, Ստեփան աղբար. պանդոկիդ մէջ հոս կը գտնուի՞ն հիմայ խումբ մը երիտասարդներու։
Ստեփան. — Ճիշդ ըսածիդ պէս։
Սահակ. — Փանոսը մէջերնի՞ն է։

Ստեփան. — Կարծեմ թէ այո։
Սահակ. — Ի՞նչ կ՚ընեն այստեղ։
Ստեփ. Ինչ որ պանդոկի մը մէջ կ՚ըլլուի։
Սահակ. — Այսինքն՝ ի՞նչ ըսել կ՚ուզես։
Ստեփ. — Կ՚ուտեն, կը խմեն, կ՚երգեն, կը զուարճանան։
Սահակ. — Կերածնին ի՞նչ բան է։
Ստեփ. Ի՜նչ բան է կերածնի՞ն... Այդ ի՞նչ հետաքրքրութիւն է. ներս մտիր՝ աչքովդ տես, իմ ի՞նչ պարտքս է քեզի այս բաներուս հաշիւ տալ։
Սահակ. — Հասկըցայ, գող աւազակ մ՚ալ դուն ես։
Ստեփ. — Այդ ի՞նչ խօսք է ըսածդ։
Սահակ. — Դու գողերուն թև թիկունք կ՚ըլլաս։
Ստեփ. — Խօսքերդ չափէ՝ թէ չէ կը զղջաս։
Սահակ. — Ի՜նչ խօսք չափել, ի՞նչ զղջալ. դուն պիտի զղջաս, լակոտ։
Ստեփան. — Լակոտը դուն ես։
Սահակ. — Այն սագը իմս էր. ինծմէ գողցեր են, և դուն...

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գիւղացիս մը և Առաջիններն

Գիւղացիս. — Գաւաթ մը սպիտակ գինի (առպանդոկապետն)։
Ստեփ. — Հիմայ. (Սահակին) կը ցաւիմ վրադ, կը ցաւիմ (կը մեկնի)։
Սահակ. — Կը տեսնէք, խարդախ խաբեբաներ... այո՛, պիտի տեսնէ՛ք...
Գիւղացիս. — Ի՞նչ ունիս, բարի մարդ։

Սահակ. — Պանդոկապետին դէմ զայրացեր եմ՝ որ գողերու կողմը կը բռնէ։

Գիւղագլուխ. — Ի՞նչ կերպով՝ բացատրէ։

Սահակ. — Սագ մը գողցեր են ինծմէն, սագ մը՝ որուն նման ուրիշ գեղեցիկ մ'երբեք եղած չէ. և հիմայ գողերը հոս ներսը նստեր կ'ուտեն զայն, իսկ ինքը կեղծել կ'ուզէ իբրև թէ բան չի գիտեր։

Ստեփ. — (գաղով) Ահա ճերմակ գինին. հրամեցէք։ (կը լեցնէ գինին. և յետոյ ձեգնօրեն կ'ըսէ Սահակին). Մնաս բարով, Սահակ. թէ որ կ'ուզես՝ յարգանքներդ կը տանիմ Փանոսին։

Սահակ. — Կը տեսնէ՞ք, պարոն. բաւական չէ, ծաղրածութիւնն ալ վրան կ'աւելցնէ։

Գիւղագլուխ. — Բայց, բարի մարդ, իրաւցընէ վստահ ես՝ որ կերածնին քու սագդ է։

Սահակ. — Ամենավստահ... թէ որ լսէիր ինչ կ'երգէին հոն քիչ մ'առաջ...

ՏԵՍԻԼ Վ.ԵՑԵՐՈՐԴ

Անդրեաս և Առաջինները

Անդրեաս. — Ո՛հ, ապրիս Սահակ... հիշդ գքեզ գտնելու կու գայի...

Սահակ. — Ի՞նչ կայ, Անդրէաս։

Անդր. — Կ'ուզէի իմացնել քեզի՝ թէ ինծի ծանօթ է թէ ով գողցեր է քու սագդ։

Սահակ. — Հա՞, դուն տեսա՞ր գողցողը։

Անդր. — Ես անձամբ տեսած չեմ, բայց տեսած են զինքը գողնալու ատեն՝ իմ որդիս Ֆրանչիսկոսը և մեր դրացի Համբարի որդին Գաբրիէլը։

Սահակ. — Ըսէ, ի՞նչպէս, ո՞ւր տեղ...

Անդր. — Երէկ քաղաքը գնացեր էին երկուքն ալ. այս գիշեր տուն դառնալու ատենին՝ տեսեր են Փանոսը՝ որ ճիշդ ձեր բակէն դուրս կ'ելլէ եղեր, պատէն դէպ ի փողոցը ցատկելով և սագն ալ ուսին վրայ։

Սահակ. — Գուշակեր էի. յայտնի է. և հիմայ ալ գիտե՞ս հոս ներսը նստեր կ'ուտեն... Հիմայ հասկըցա՞ք, Պարոն...

Գիւղագլուխ. — Հասկըցայ. բայց չըլլա՞յ թէ յանկարծ տեսնող այն երկու պատանիները սխալած ըլլան։

Անդրեաս. — Զէ, չէ. որովհետև լսեր են նաև ընկերներուն Փանոսի անունը տալը։

Գիւղագլուխ. Թէ որ այդպէս է...

Սահակ. — Շուտով պէտք է մարդիկներ ժողովենք, զինուինք և վրանին յարձակինք և...

Գիւղագլուխ. — Ի՞նչ կ'ըսես. որպէս զի իրաւունքդ ալ կորսընցնե՞ս, և յետոյ ծախքերն ալ վճարե՞ս...

Սահակ. — Եւ սակայն ուրիշ հնարք չկայ։

Գիւղագլուխ. — Այս գիւղիս մէջ դատ կտրող մէկը չկա՞յ։

Անդրեաս. — Ռէսը կայ, բայց...

Սահակ. — Բայց անբան անասուն մ'է, որ...

Գիւղագլուխ. Բայց այդ տեսակ դատ մը կտրելու համար՝ մեծ հանճարի մը պէտք չկայ։ Դուք իմ խորհուրդիս մտիկ ըրէք. գնացէք ձեր գանգատն իրեն ընելու, և պիտի տեսնէք...

Սահակ. — Բայց չէ՞ք գիտեր, պարոն, որ ամէն չարագործ մարդիկ այդ Ռէսին քով իրենց դատը կը վաստըկին. իսկ բարի մարդիկ միշտ անիրաւ կը վճռուին և կը դատապարտուին տուգանքի և բանտի։... Ո՛հ, ես երբեք չեմ ուզեր...

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Փանոս իր ընկերներուն հետ երգելով պանդոկէն դուրս կ'ելլեն։

Օ՛խ ի՞նչ հանդէս այսօր ի՞նչ համ
Վայլեցինք այս կերխումով,
Փետուրք միայն և ոսկորներ
Մընացին քեզ, բարեկամ։ } կրկ։
Է՜ ի՞նչ կեցեր ես մըտահոգ,
Կ'ուզե՞ս թեւերը սագին,
Վարժ խոհակերն անոնց խնայեց,
Կը սպասեն ներսն, հոն են հոն։ } կրկ.

Սահակ. — Տեսնե՞նք... (*Խուրմրին անձիւնքը կը խնտան*)։

Գիւղացիս. — (*ցած առ Սահակ*) *Խոհեմ եղիր... թող որ երթան... պիտի տեսնես...*

Սահակ. — Չեմ կրնար դիմանալ...

Փանոս. — Օ՜, Սահակ աղբար, քեզի ի՞նչպէս է... *շատ սրգողած կ'երեւաս այսօր. տհաճութիւն մը ունի՞ս, ձախորդութի՞ւն մը հանդիպեր է։*

Սահակ. — Ո՜հ... (*կարգի դուրս անհամբերու

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Սահակ, Գիւղազրօս և Անդրէաս։

Սահակ. — Հասկըցաք ուրեմն, պարոն. համոզուած էք որ այն սրիկան է սագիս գողը։
Գիւղազրօս. — Տարակոյս չկայ այլ եւս. ուստի պէտք չէ ժամանակ կորսընցընէք՝ շուտով երթալու Ռէսին իմաց տալու։
Սահակ. — Յետոյ ի՞նչ պիտի ըլլայ։
Գիւղազրօս. — Խօսքիս վրայ վստահ եղէք որ արդարութիւնը տեղը պիտի երթայ։
Անդր. — Փորձ մ'է, ընենք։
Գիւղազրօս. — Հաւատացէք ինծի. շուտով գնացէք Ռէսին քով. ես պանդոկապետին կ'երթամ վճարքս ընելու, և յետոյ... յետոյ. կ'օգնեմ ձեզի, պիտի օգնեմ ձեզի. առ այժմ մնաք բարով (կը մեկնի)։
Սահակ. — Յարգանքներս, պարոն։
Անդր. — Ծառայ եմ ես ալ, պարոն։
Սահակ. — Ի՞նչ կ'ըսես դուն... Անդրէաս։
Անդր. — Ես կ'ըսեմ որ այս պարոնը որ հոս գիւղացնացութեան եկած է՝ մեծ մարդ մ'է, և կրնայ իրաւցնէ օգնել մեզի... Է՜հ, միթէ ամէն անգամ չարագործները պիտի յաղթանակեն. անոնց ալ հատուցման օրը վերջապէս պիտի հասնի։
Սահակ. — Աստուած տար. բայց հիմկուհիմայ խեղճ սագս այդ չարագործներուն փորերնուն մէջն է... խեղճ սագս, խեղճ սագս (կը մեկնին)։

Վերջ Առաջին Արարուածին։

Բ. ԱՐԱՐՈՒԱԾ

ԴԱՏԱՒՈՐ ՌԷՍԻՆ ՏՈՒՆԸ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Ռէսն և չորս գիւղացիներ

Ռէս. — (մտածման մէջ շրջագայելով) Սագ մը գողցուած է. պանդոկի մէջ կերուած է. սագին տէրը հատուցումն կ'ուզէ։ Շա՜տ կնճռոտ խնդիր մ'է... Կը գուշակեմ որ ամբաստանեալը պիտի ժխտէ... բայց ինծի պէս մարդու մը հետ գործ ունի։ — Եթէ կարելի ըլլար փորը ճղքել, քննել ներսը և չօշափել տալ իրեն յանցանքին առարկան... այն ատեն դժուարութիւնը շուտով մը կը լուծուէր։ Բայց ես ընելիքս գիտեմ... այնպիսի հարցափորձ մ'ընեմ պիտոր՝ որ չփոթի, և ճշմարտութիւնը բռնի խոստովանի... Է՜, հինցած մէկն եմ այս արուեստիս մէջ։ — Գրագիրները սայլայն կ'ուշանան գալու, զորս կանչեցի գրի առնելու ըլլալիք հարցուփորձն և հրատարակելիք վճիռս... (Դռռը կը զարնուի). ո՛հ, ահա եկան (կ'երթայ բանալու)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Գիւղագրօս և Առաջիններն

Գիւղագրօս. — Ներելի՞ է արդեօք։

Ռէս. — Հրամեցէք. — (ինքնիրեն) Չէ, գրագիրները չեն։

Գիւղագրօս. — Ձեր իշխանութիւնը այս գիւղիս ո՞ւմն է։

Ռէս. — Այո՛. բայց կը փափաքիմ իմանալ թէ որո՞ւն հետ խօսակցելու պատիւն ունիմ։

Գիւղագրօս. — Ես մերձակայ կողմերս գիւղագնացութեան եկեր եմ՝ զբօսնելու համար, և քանի մ'ամիս մտադիր ըլլալով այստեղ անցնելու, ինծի պարտք համարեցայ գալու և անձամբ ճանչնալու տեղւոյս իշխանութիւնը և յարգանքներս իրեն մատուցանելու։

Ռէս. — Նեղութիւն կրեր էք. և սակայն ինծի մեծ պատիւ կը համարիմ...

Գիւղագրօս. — Ո՜հ, պատիւն իմս է, պարոն Ռէս։

Ռէս. — Լաւ, թող երկուքնուս ալ ըլլայ։ Կը խորհիք ուրեմն ժամանակ մը հո՞ս մնալու։

Գիւղագրօս. — Այո՛, գիւղս գիւղքը ինծի շատ հաճելի եկաւ, և օդն ալ առողջարար կը գտնեմ ինծի։

Ռէս. — Կը վստահացնեմ ես ալ զձեզ՝ որ գոհ պիտի մնաք։

Գիւղագրօս. — Բնակիչները լա՞ւ մարդիկ են։

Ռէս. — Բնակիչնե՞րը... Է՛հ, աղէկն ալ կայ, գէշն ալ կայ։ Բայց ամենէն աւելի անտանելին գողերն են։ Ա՜հ, այդ գողերը. ինչ ճար ընես չես գիտեր, մէյմը մաքերնին դրած են գողնալը, ալ չնայելով որ ուրիշներուն ունեցածները կը յափշտակեն։ Այսուհանդերձ

կրնանք նաև մխիթարուիլ մտածելով՝ որ ուրիշ գաւառներու մէջ չարագոյն են։ Այս յայտնի է՝ որ եթէ ես հոս չըլլայի՝ գործերն հոս ալ աւելի ձախորդ կերպարանք պիտի առնէին. բայց ես, գովեստ թող չըլլայ ըսածս՝ սանձ դրեր եմ։ Ունեցած փորձառութեամբս և անկողմնակցութեամբս ամենուն սէրը գրաւեր եմ, և ահա այս կերպով կրնամ կառավարել։

Գիւղագրօս. — Իրաւ է, բանը մէյմը սրտերուն վրայ տիրելն է։

Ռէս. — Բայց գիտնաս մէյմը ինչպիսի՞ գործեր կը հանդիպին։

Գիւղագրօս. — Կը գուշակեմ։

Ռէս. — Ամէն տեսակ անհատնում դատաստաններ։

Գիւղագրօս. — Կը համարիմ սակայն որ շատ դժուարակնճիռն պիտի չըլլան։

Ռէս. — Ո՜հ, յանպիսի խնդիրներ կը հանդիպին՝ որ ըստ ինքեան շատ կնճռոտ են, բայց ես...

Գիւղագրօս. — Ի հարկէ, կը հասկընամ։

Ռէս. — Այսօր, զոր օրինակ, այնպիսի դատաստան մ'ունիմ ընելիք՝ որ շատ դժուարին է լուծել։

Գիւղագրօս. — Իրա՞ւ։

Ռէս. — Խնդիրն է գտնել սագ մը՝ որ գողցուեր է և պանդոկի մը մէջ կերուեր է։

Գիւղագրօս. — Ի հարկէ, այդպիսի բան մը ոչ միայն դժուարին՝ այլ և անկարելի կը թուի... այսինքն գտնել կերուած սագ մը։

Ռէս. — Ե՛ սակայն ես կ'ուզեմ յաջողիլ։

Գիւղագրօս. — Ըսէք խնդրեմ, այս դատաստաններուն կրնայ բազմութիւնը ներկայ գտնուիլ։

Ռէս. — Ահաւասիկ, ըսեմ. դատաստաններն ըստ ինքեան հասարակաց ներկայութեան պէտք է կատարուին, և ես կը փափաքէի՝ եթէ

կարելի ըլլար՝ որ ամբողջ գաւառը ներկայ ըլլար։ Բայց ի՞նչ ընեմ, բնաւ մէկը հետաքրքիր եղող չէ մնացեր։ Ժամանակ մը ոմանք կու գային... Բայց լսելով իմ հարցուփորձերս, ըրած պատճառաբանութիւններս և տուած վճիռներս՝ մէկիկ մէկիկ հեռացան, գալէ ետ կեցան։

Գիւղազբօս. — Ձեմ հասկընար ինչո՞ւ այդ հեռեւանքը պէտք է ունենայ։

Ռէս. — Եւ սակայն իրաւն այս է. շատ անգամ տեսայ՝ որ հազիւ բերանս կը բանամ խօսելու, իրենք կը սկսին խնտալ, վեր ելլել ու գնալ։

Գիւղազբօս. — Ըսածնիդ քիչ մը տարօրինակ կ՚երևի։

Ռէս. — Ի՞նչ ընեմ. ես նախապաշարմունքէ ազատ մէկն եմ և միշտ ճշմարիտը կը խօսիմ, և մարդս ճշմարտութիւն խօսելով՝ երբեմն ինքն իրեն ցաւած ակռաներուն ալ կը դպչի։

Գիւղազբօս. — Ես այս գիւղիս բնակիչներէն մէկն ըլլալ կը փափաքէի, և պիտի գայի ներկայ գտնուէի՝ նաև ուրիշներուն ալ բարի օրինակ տալու համար, որովհետև շատ կրթական և օգտաւէտ գործ մ՚է։ Ո՜հ, գէթ այսօրուան դատին կարենայի ներկայ գտնուիլ։

Ռէս. — Այդ ի՞նչ խօսք է՝ կարեւնայի՜... ես ինքնին կը խնդրեմ զայն ձեզմէ. ինծի մեծ պատիւ մ՚ըրած պիտի ըլլաք... մեծ բաղդ մ՚է այդ ինծի համար։

Գիւղազբօս. — Լաւ ուրեմն, ձեր բարութենէն պիտի օգտուիմ։

Ռէս. — Շատ աղէկ. քիչ ատենէն հոս պիտի գան նաև գրագիրները, և անմիջապէս դատը կը սկսինք։

Գիւղազբօս. — Թէ այդպէս է՝ ներեցէք որ քանի մը վայրկեան հեռանամ՝ կարեւոր գործի մը համար, շուտով կը վերադառնամ (կը մեկնի)։

Ռէս. — Ի՛նչպէս որ կը փափաքիք։ — (Առանձինն) Ո՜հ, ինչպիսի՛ փառաւոր դատաստան մը պիտի կտրեմ այսօր, ինչպիսի՛ վեհութեամբ և շքեղութեամբ. այնպիսի վճիռ մը կ՚ուզեմ տալ այսօր՝ որ ամէն լսողները մատերնին խածեն, հիանան։ Թող այդ պարոնն ալ հասկընայ թէ ոչ սեր կան՝ որ աքանչացման արժանի են (դուռը կը զարնեն)։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Վշաս և Ամբրոս գրագիրներ և Ռէս

Ռէս. — Հրամեցէք ներս, բարեկամք։

Վշաս և Ամբր. — (ժոլով) Մեր յարգանքները...

Ռէս. — Այսօրուան դատաստանին ներկայ պիտի գտնուի գիւղազբօսիկ պարոն մը։

Վշաս. — Պատիւ կը համարինք մեզի։

Ամբրոս. — Ձմեզ երջանիկ կը համարինք։

Ռէս. — Շուտ ուրեմն, պէտք եղածը պատրաստեցէք. (կը գետեղեն գրասեղան մը, աթոռներ, թուղթ, գրիչ, և այլն)։

Վշաս. — Ահաւասիկ ամէն ինչ պատրաստ է։

Ռէս. — Շատ աղէկ. կը խնդրեմ այսօր մեծ արթնամտութիւն ունենաք. պէտք է որ այսօրուան դատը մեզի պատիւ բերէ։ — Բազմինք տեղերնիս (կը նստին և կ՚երգեն)։

Ռէս. (երգով)

Ամենամեծ և անչափ
Իշխանութեանն է սահման
Ռէսի մ՚որ ինձ կը նմանի։

Երկոտանի մ'կը գողնան
Զար անպիտան սրիկաներ.
Աչքերն արցունք՝ հոս ոչխին
Կը դիմէ տէրը սագին.
Արդարութիւն կ'աղերսէ։

(Երկու գրագիրներն ի միասին կ'երգեն)

Մենք ալ մէկտեղ, ով ընկեր,
Պիտի նըստինք դատաւոր,
Եւ վրկաները քընենք.
Եւ դուրս հանենք ակներև
Ճըշմարտութիւն քօղասքող։
Ամենամեծ և անչափ
Իշխանութիւն է սահման,
Ոչսի մ'որ քեզ կը նմանի։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Սահակ և Առաջինք

Սահակ. — (Ներսէն) Ներելի՞ է մտնել։
Ռէս. — Հաւասիկ դատախազը։
Սահակ. — (Ներսէն) Հրաման կը շնորհէք։
Ռէս. — Ներս եկուր։
Սահակ. — (մտնելով) Իմ յարգանքներս, պարոններ։
Ռէս. — Առաջ եկուր. ուշ դիր ամէն հարցմունքներուս, և որոշ կերպով պատասխանէ, ճշդորէն և անկեղծաբար. լաւ ուշ դիր ըսածիս՝ պէտք է որ ճշմարիտն ըսես, գիտցիր որ ամէն ըսածներդ գրի կ'առնուին. վայ քեզի թէ որ հակասութեան մէջ ինկնաս և սուտդ բըռնուի։

Փաւնոս. — (Ներսէն) Մտնել կարելի՞ է։
Ռէս. — Ո՛հ, ամբաստանեալն է։ Սպասէ մինչև որ կանչուիս։
Փաւնոս. — (գլուխը դռնէն ներս խոթելով). Շատ լաւ, պարոն Ռէս. (երբեմն երբեմն գլուխը դռնէն ներս կը ցուցնէ՝ դատին ընթացքին մէջ)։
Ռէս. — Հիմայ սկսինք մեր գործը։ — Ուրեմն դուն կը կոչուիս...
Սահակ. — Սահակ Անբախտունի։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գիւղապրօսն և Առաջինք

Գիւղապրօսն. — Ներելի՞ է մտնել։
Ռէս. — Հրամեցէք, պարոն. ահա այստեղ բազմեցէք։
Գիւղապրօս. — Ի՞նչպէս որ ձեր կամքն է։
Ռէս. — Պիտի տեսնէք թէ ի՞նչպէս դատաստան կը կտրուի... Ուրեմն դուն Սահակ՝ Անբախտունի կը կոչուիս, և ի՞նչ կ'ուզես։
Սահակ. — Իմ սագս կ'ուզեմ։
Ռէս. — Յաւանա՜կ. ի՞նչ կը կարծես. ուրեմն հոս վաճառանո՞ց մ'է և մենք ալ սագի վաճառականնե՞ր։ Անկիրթ և տխմար գիւղացի մ'ես։ (Առ Գիւղապրօսն՝ ժաժուկ) Զարմանք չազդեն թող ձեզի այս ըսածներս. ճշմարտութիւնն աւելի լաւ հասկընալու համար կ'ըթիւնն աւելի լաւ հասկընալու համար կ'ընեմ։ — (Դէպ ի Սահակ) Ամո՜թ քեզի, ամըչցիր։
Սահակ. — Բայց ես իմ սագս ձեզմէ չէ՞ որ կ'ուզեմ, պարոն Ռէս։
Ռէս. — Ուրեմն ուսկէ՞ կ'ուզես։

Սահակ. — Փանոսէն։
Ռէս. — Փանոսէ՞ն. բայց իրմէն ինչո՞ւ կ'ուզես։
Սահակ. Որովհետև ինքն ինծմէն գողցեր է։
Ռէս. — (Գիւղագրօսին) Կը տեսնէ՞ք ինչպէս ճշմարտութիւնը ակնյայտնի մէջտեղ կ'ելլէ։
Գիւղագրօս, Կը տեսնեմ։ — (ինքնիրեն) Ի՜նչ տարօնինակ մարդ։
Ռէս. — Այդ ի՞նչ կերպ խօսիլ է. ո՞վ քեզի սորվեցուց ուրիշը զրպարտել. կարելի է դուն գող մ'ես. և յայտնի է որ բոլոր գողերը իրենց գողութիւնը՝ գող չեղողներուն վրայ կը ձգեն։
Գիւղագրօս. — (ինքնիրեն) Ի՜նչ տխմար ռէս է։
Սահակ. — Եւ սակայն ըսածս ճշմարիտ է։
Ռէս. — Է՜հ, ես քեզի կը հաւատամ։ Եթէ ըսածդ իրաւ է՝ դուն ի հարկէ սագիդ յատկութիւնները պէտք է որ գիտնաս։
Սահակ. — Ի հարկէ գիտեմ։
Ռէս. — Լսենք ուրեմն. ոտքեր ունէ՞ր։
Սահակ. — Այո՛, պարոն։
Ռէս. — Սրունքներ ունէ՞ր։
Սահակ. — Եթէ ոտք ունէր, ուրեմն...
Ռէս. — Ցաւանակ ես. առաջ տանինք. ըսէ, կտուցը կարճ էր թէ երկայն։
Սահակ. — Երկայն։
Ռէս. — Լաւ, մազերն ի՞նչ գոյն ունէին։
Սահակ. — Մազերը։
Ռէս. — Այո՛, այո՛... ի՞նչ, միթէ գլուխը ճաղատ էր։
Սահակ. — Ա՛, հասկըցայ. փետուրները սև ու ճերմակ խառն էին։
Ռէս. — Գէ՞ր էր թէ վատոյժ։
Սահակ. — Ամենագէր։
Ռէս. — Նայէ՛ որ չափազանց չըսես։
Սահակ. — Ապահով եղիր, պարոն Ռէս. ամենագէր էր։
Ռէս. — (առ Գիւղագրօսն) Ուշ դրէք որ հիմայ

թակարդին մէջ պիտի բռնուի։ — (Առ Սահակ) Ի՞նչ կ'արժէր։
Սահակ. — Ութը ֆրանքէն պակաս չէր արժէքը։
Ռէս. — Լաւ. ծախելու համար ի՞նչ գին առիր։
Սահակ. — Ոչինչ։
Ռէս. — Ահաւասիկ քու բերնովդ բռնուեցար. խաբեբայ ես, զրպարտիչ ես. գող ես։
Սահակ. — Ի՜նչպէս, ինչպէս։
Ռէս. — Ըսիր որ սագդ ծախեր ես, ուրեմն գողցուած չէ քեզմէն... թակարդին մէջ ինկար։ Է՜հ, ինծի հետ խաղալ չըլլար. վարպետ խօսքերը բանի չեն գար... Արուեստին մէջ հինցած մէկն եմ։
Սահակ. — Բայց ո՞վ ըսաւ թէ սագս ծախեր եմ։
Ռէս. — Դուն, դու ինքդ ըսիր. ես քեզի հարցուցի թէ՝ ծախելու համար ի՞նչ գին ստացար. դուն ալ պատասխանեցիր. Ոչինչ։ Եւ այդ ըսելով՝ կը հաստատես ուրեմն որ սագդ ծախեր ես։ Ըսածս ճի՞շդ է թէ ոչ, պարոն գրագիրներ։
Վլլաս և Ամբրոս. — Այդպէս է։
Ռէս. — Ի՞նչ կ'ըսէք դուք, պարոն։
Գիւղագրօսն. — Բայց սակայն, ճիշդն ըսելով...
Ռէս. — Դատապարտուած ես, դատապարտուած։
Սահակ. — Սակայն ըսածիս ճշմարտութեան երկու վկաներ ունիմ։
Ռէս. — Վկաներ, երկո՞ւ հատ... Ուշ դիր. եթէ կ'ուզես որ ճշմարիտն ըսեմ՝ ես բնաւ մէկու մ'ալ չեմ հաւատար. այսուհանդերձ թէ որ իրաւունք երկու վկաներ ունիս՝ ես օրէնքին համաձայն կը չարժիմ և դատապարտութենէ զքեզ կ'արձըկեմ. պայմանաւ որ ամբաստանեալն ալ իրեն վկաները չունենայ. ի՞նչ կ'ըսէք՝ պարոն գրագիրներ։

Վշաս և Ամբրոս. Այդպէս է։
Փանոս. — (դուրսեն ներս երկրնցնելով գլուխը) Ես ալ վկաներս ունիմ. կ'երթամ շուտով կանչելու։
Ռէս. — Լաւ ուրեմն, ո՞ւր են վկաներդ. հեռո՞ւ են։
Սահակ. — Հոս մօտը՝ քովի փողոցն են։
Ռէս. — Գնա՛ շուտով կանչէ։
Սահակ. — Շատ լաւ, հիմայ (կը մեկնի)։
Ռէս. — Հիմայ կրնանք գէթ քիչ մը հանգիստ առնուլ։ — Ի՞նչ կ'ըսէք ուրեմն, պարոն, այս-պիսի դատաստաններու. միթէ հետաքրքրա-կան չե՞ն։
Գիւղապրօս. — Շատ կը փափաքիմ վերջաւո-րութիւնը տեսնելու։
Ռէս. — Ո՛հ, վճիռը տալուն ժամանակն՝ ահա-ւոր բան մ'է։ Պիտի տեսնես թէ ինչ գոռում գոչում պիտի արձրկէ դատապարտուածը. պիտի աղաղակէ. Անիրաւութիւն է, անիրա-ւութիւն։ — Միշտ ալ այդպէս կը հանդիպի. չկրցայ բնաւ մէկը համոզել թէ տրուած վը-ճիռը արդար է։ Անպիտան են, և այսչափ բաւ է։ Կարծեմ ամէն տեղ այսպէս ըլլալու է. ըսածս ճիշդ չէ՞, պարոն գրագիրներ։
Վշաս և Ամբրոս։ — Այդպէս է։
Գիւղապրօս. — Ուղիղն ըսելով՝ ես կը ճանչնամ սակայն շատերը՝ որ յայտնի և ստոյգ ապա-ցոյցներու դէմ՝ ալ չհամարձակեցան բերան բանալու և բողոքելու, մանաւանդ թէ իրենք զիրենք իրաւցնէ յանցաւոր խոստովանեցան։
Ռէս. — Հաւատացէք, պարոն, որ խաբուեր էք. դուք դեռ ինչպէս պէտք է աշխարհը ճանչ-ցած չէք։
Գիւղապրօս. — Լաւ. բաւական է. տեսնենք...

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

Սահակ և Երկու վկայք և Առաջինը

Սահակ. — Ահաւասիկ ես ու երկու վկաներս, որոնք ամէն բան գիտեն և ամէն բան տե-սած են։
Ռէս. — Այո՛, այո՛, պիտի լսենք. բայց նախ և առաջ վկաները պէտք է գիտնան՝ որ մշտնջե-նաւոր բանտի պիտի ենթարկուին՝ եթէ յանդգը-նին սուտ վկայութիւն տալու։
Առաջին վկայ. — Ո՛հ, ապահով եղէք որ այդ պատճառաւ երբեք բանտի պիտի չդատապար-տուինք։
Ռէս. — Ուրեմն, հիմայ պատասխանեցէք հար-ցուփորձիս։ — (Վկաներուն մէկուն) Դուն տե-սա՞ր... ի՞նչ բան տեսար։
Ա. Վկայ. — Ես տեսայ երէկ գիշեր որ Փանոսը՝ Սահակի տանը բակին պատէն դէպ ի դուրս վար կը ցատքէր՝ սաղ մը ուսին վրայ. և ուրիշներէ՝ որ կը սպասէին հոն իրեն՝ լսեցի որ կ'ըսէին. «Ցաջողեցա՞ր ուրեմն, Փանոս». և ինքն ալ պատասխանեց. «Ահաւասիկ Սա-հակի գեղեցիկ ու գիրուկ սագերէն մէկը»։
Ռէս. — Գրեցի՞ք, գրագիրներ։
Վշաս և Ամբրոս. — Բոլորն ալ։
Ռէս. — (միւս վկային) Դուն ի՞նչ տեսար կամ լսեցիր։
Բ. Վկայ. — Ես՝ Գաբրիէլին հետ գտնուելով՝ տեսայ և լսեցի այն ամէնը՝ ինչ որ նա հի-մայ պատմեց։
Ռէս. — Բաւական է. ճշմարտութիւնը յայտնի է. դուն, Սահակ, իրաւունք ունիս և ըրած վնասիդ հատուցումն պիտի ստանաս։ Բայց

արտաքին օրինական ձեւակերպութիւնը պա-
հելու համար՝ նաև հակառակ կողման ալ
մտիկ ընենք։ — Գրագիր, ներս կանչէ փա-
նոսը։

Վլաս. Շուտով։ — (Դռնեն) Է՛, ներս արի։

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Փանոս և Առաջինները

Ռէս. — Առաջ եկուր, առաջ, ով սա՛գ-ա՛-գո՛ղ։

Փանոս. — Այդ ինչ խօսելու կերպ է, պարոն Ռէս. կչռէ բառերդ, վասն զի գիտնաս որ նաև ռէսներուն համար ալ բանտը ստեղծուած է։

Ռէս. — Օ՛, օ՛, այդ ինչ անարէսութիւն է. յայտնի բան է՝ քեզի պէս գողերը նաև անզգամ ալ կ'ըլլան։ Այնպէս չէ՞ գրագիրներ։

Վլաս և Ամբրոս. — Այնպէս է։

Ռէս. — Բայց այդ յանդգնութիւնը վրադ պիտի չմնայ. ըսէ ուրեմն (հեգնօրեն) ով ազնուամեծար պարոն... լա՛ւ է այսպէս։

Փանոս. — Շարունակեցէք ըսելիքնիդ։

Ռէս. — Դուն Սահակէն սագ մը գողցեր ես։

Փանոս. — Սուտ է. ես սագ չեմ գողցած։

Ռէս. — Ուզածիդ չափ ժխտէ. եղածն յայտնի բան մ'է, ամենայայտնի, բնաւ տարակոյս չի վերցրներ։

Փանոս. — Իսկ ես կ'ըսեմ որ Սահակ զրպարտիչ մ'է։

Ռէս. Է՛հ, իրաւ չէ՞ որ երէկ առաւօտ պանդոկին մէջ՝ ընկերներուդ հետ միասին՝ սագ մը կերած էք։

Փանոս. — Այո՛, այդ բանը ճիշդ է։

Ռէս. — Ուրեմն... գողցեր ես։

Փանոս. — Դուք, պարոն Ռէս, բնաւ սագ կերած չէ՞ք կեանքերնուդ մէջ։

Ռէս. — Ո՛հ, շատ անգամներ։

Փանոս. — Ուրեմն... այնչափ անգամներ ալ սագեր գողցեր էք։

Ռէս. — Յաւանակ մ'ես։ — Շիտա՞կ է թէ չէ, գրագիրներ։

Վլաս. և Ամբրոս. — Այնպէս է։

Ռէս. — Ես ամէն անգամ որ սագ կերեր եմ՝ գներ և վճարեր եմ։

Փանոս. — Ես ալ որ երէկ սագ կերայ, ձեզի պէս գնեցի և վճարեցի։

Ռէս. — Սուտ է ըսածդ։

Փանոս. — Ճշմարիտ է։

Ռէս. — Խաբեբայ մ'ես։ — Այնպէս է՝ թէ չէ, գրագիրներ։

Վլաս և Ամբրոս. — Այնպէս է։

Ռէս. — Ուրեմն...

Փանոս. — Ուրեմն ապացոյց պէտք է ըսածնիդ հաստատելու։

Ռէս. — Հա՛, ապացոյցնե՞ր կ'ուզես։ Լաւ ուրեմն, ապացոյցները կեցած են, և օրէնքէն ճանչցուած ապացոյցներ են. երկու վկայ կեցած են՝ որ ամէն բան տեսեր են. գո՞հ ես։

Փանոս. — Ամենագոհ։

Ռէս. — Ուրեմն դուն ճանչցուած ես... (Առ Գիշղագրօսն) (Ուշ դրէք որ ահա դատը պիտի կտրեմ և վճիռը տամ) դուն ճանչցուած ես Սահակի սագը գողցողը, և դատապարտուած ես ինասներն ու ծախքերն հատուցանելու, և երեք ամիս ալ այս գիւղիս բանտին մէջ փակուած մնալու։ — Ի՞նչ կ'ըսէք դուք, գրագիրներ։

Վլաս և Ամբրոս. — Այդպէս է։

Ռէս. (կ'երգէ)

Երբ ես տղեկ մ'էի դեռ
Պապիկըս ճիշդ գուշակեց,
Թէ օր մ' հանճար հրաշալի
Պիտ 'ըլլայի ես այսպէս.
Փաստաբանէ, կոմսէ մ'ալ
Դեռ աւելի սըրամիտ։

Վայրկենի մը մէջ իսկոյն
Ահա կընճռոտ վէճ սագին
Ես լուծեցի դիւրութեամբ.
Եւ չըկայ մէկը, կ'երդնում,
Արիստոտէլն իսկ, կ'ըսեմ,
Որ ըրածիս չըհաւնի։

Վլաս և Ամբրոս. (կ'երգեն)

Վայրկենի մը մէջ իսկոյն
Ահա կընճռոտ վէճ սագին
Դու լուծեցիր դիւրութեամբ.
Եւ չըկայ մէկը, կ'երդնունք,
Արիստոտէլն իսկ, կ'ըսենք,
Որ ըրածիդ չըհաւնի։

Փանոս. — Պարոն Ռէս, ներեցէք բայց կը տեսնեմ որ դուք շատ շուտով վճիռներ կը լըփըռտաք։
Ռէս. — Ի՞նչ ըսիր։
Փանոս. — Վկաներ խօսեցնելու իրաւունքը միայն Սահակի՞ն վերապահեալ է։
Ռէս. — Ի՞նչ. դուն ալ վկաներ ունիս։
Փանոս. — Այո՛, պարոն։
Ռէս. — Լաւ, բեր ուրեմն։

Փանոս. — Հոս դուրսն են։
Ռէս. — Գրագիր, նէրս կանչէ։
Վլաս. — (դռնէն) Է՜, ներս եկէք։

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Տասուերկու ընկերներ՝ երգեցիկ խմբեն, և Առաջինը։

(Վկայք ներս կը մտնեն՝ յարգանքներ ընելով Ռէսին)։

Ռէս. — Ո՛, ո. այդ որչափ մարդ, որչափ մարդ։
Փանոս. — Ահաւասիկ, պարոն Ռէս. դուք զիս դատապարտեցիք այն պատճառաւ, որովհետև Սահակ երկու վկայ բերած էր՝ որ կը հաստատեն թէ զիս տեսեր են սագի գողութիւն ընելով. իսկ ես տասուերկու վկայ կը ներկայացնեմ, որոնք կրնան երդմունք ընել որ զիս տեսած չեն գողնալով։ Ըսածս ճի՞շդ է թէ չէ. ըսէք. տեսա՞ծ էք զիս որ սագ գողցած ըլլամ։
Վկայք. — Ոչ, չենք տեսած։
Փանոս. — Գանք ուրեմն ձեզի, պարոն Ռէս. երկո՞ւքը աւելի կ'արժեն թէ տասուերկուքը։
Ռէս. — Օրհնած, ի՞նչ հարկ կայ հարցնելուդ. հրաշալի կերպով յաղթանակ տարիր դուն. դուն անմեղ ես։ Ի՞նչ կ'ըսէք, գրագիրներ։
Վլաս և Ամբրոս. — Այնպէս է։
Սահակ. — Ի՞նչ, ի՞նչպէս։
Ռէս. — Սահակ զրպարտող է։
Սահակ. — Պարոն Ռէս...
Ռէս. — Ի՞նչ պարոն Ռէս. տասուերկուք՝ երկուքի դէմ. տասուերկո՞ւք կ'ըսեմ, տասուերկո՞ւք, տասուերկուք՝ երկուքի դէմ...
Գիւղագլուխ. — (Ո՛հ, իրաւ որ անհաւատալի

պիտի երեւի անոր՝ որ այսպիսի տարօրինակ դատելու կերպ մը չէ լսեր։

Ռէս. — Լռութիւն, ուշ դրէք ամէնքդ ալ. լռեցեք։ — Կը հրատարակեմ դատավճիռը. Սահակ զրպարտիչ գտնուեցար. և իբրև այդպիսի՝ դատապարտուած է տալու Փանոսի և նորա ընկերաց՝ երկու սագ. երկերկու սագ ալ գրագիրներէն իւրաքանչիւրին, և երեք սագ ալ, բայց ամենէն աւելի ընտիրները, Ռէսին։ — Ի՞նչ կ՚ըսէք, գրագիրներ։

Վշլաս և Ամբրոս. — Այդպէս է։

Փանոս և ընկերք. — Կեցցէ՜ Ռէսը։

Սահակ. — Բայց անիրաւութիւն մ՚է այս բանս։

Ռէս. — Մտիկ ըրէք դարձեալ. բաց ասկից՝ Սահակ դատապարտուած է վեց ամիս բանտարկութեան, որ այս վայրկենէս կը սկսի։ — Պահանորդք բանտը տարէք զինքը, որպէս զի յետոյ նաև իրեն սուտ վկաներն ալ պատժենք։ - (Զինուորք կը բռնեն Սահակը՝ տանելու համար)։

Գիւղագլուխ. — Կեցէք։

Ռէս. — Ի՞նչ կայ, որ...

Գիւղագլուխ. — Կարդացէք այս թուղթը, ուսկից պիտի հասկընաք որ ես ինքս եմ Եղեռնական Դատարանին Նախագահը։ Ես ինքս ականատես և ականջալուր վկայ եղայ պարոն Ռէսի տխմարութեան, այն խարդախին չարութեան (ցուցնելով Փանոսը) և այս բարի մարդուն անմեղութեան (ցուցնելով Սահակը)։ — Դուն Սահակ՝ հիմկուհիմայ բոլորովին ազատ ես, և յետոյ քեզի պէտք եղած հատուցմունքը լիովին պիտի կատարուի. իսկ դուք ամենքդ ալ (Փանոսի և ընկերաց դառնալով) կալանաւորուած էք. և նոյնպէս պարոն Ռէսն ալ դատաստանի պիտի ենթարկուի։

Ռէս. — Տէ՜ր ողորմած... Գրագիրնե՜ր, գրագիրնե՜ր...

Վշլաս և Ամբրոս. — Այնպէս է։

Սահակ. — Աստուած վարձատրէ զձեզ, պարոն։

Գիւղագլուխ. — Շատ գոհ եմ՝ որ դիպուածը զիս այս գիւղը բերաւ, որով բախտ ունեցայ ճշմարտութիւնն երեւան հանելու և արդարութեան յաղթանակել տալու։

Փանոս և ընկերները կ՚երգեն

Ո՛վ չարաբաստ դատակնիք,
Որով բախտին ըզգեստներ,
Այսօր սուգի գոյն առին։

Զարիք ամէն և խաբկանք,
Մահուան վրճիռ ըստացան,
Արդարութիւնըն ճըխաց։

ՎԵՐՋ

ՀՍՍՌ-Ի ԳԻՏ. ԱԿԱԴ.
Ա. Մասեռյանի անվ.

ԱԽ-1
ԳՐ-1

ՇԱՐՔ ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

9 ՀԱՏՈՐ

	Ֆր. Զուից.
Ա. — Երեք Մահապարտք	1 50
Բ. — Վյաս Կառնիացի	1 50
Գ. — Աղետալի դիպուածք Իոլանտիոյ	1 50
Դ. — Վիլհեմ	1 50
Ե. — Տիրերիսի Նաւավարը	1 50
Զ. — Գաղտնիք Վենետկոյ	1 50
Է. — Իրական դէպքեր	1 50
Ը. — Կուզ Սիմոնը	1 50
Թ. — Երկու հազար մղոն Ամերիկայի ներքև	2 —

Այս 9 հատորները միասին՝ կ'արժեն. 12 —

Եզովբոս	3 —
Սիրտ	2 50
Կեանքի նախօրեկին	2 60

Գրոգորն Թոգրիերէվան 25 հատոր, ժողովրդական, դպրոցական երկսեռ մանկուոյն համար՝ պատմական, ազգային գեղեցիկ թատերգութիւններ են, իւրաքանչիւրին հետ միացած նաև Զաւեշտ մը։ — Մէկ հատորը կ'արժէ. — 80

Դիմել
Imprimerie Arménienne
St. Lazare VENISE (Italie)

ՀՀ Ազգային գրադարան
NL0331830

28787